18995

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՅԵ. Դ. ՍՏԱՍՈՎԱ

# ՄՈՊՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ԶԵԿՈՒՑՈՒՄ
ՄՈՊՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

327.3
Ս-92

Հրատարակություն ՀՍԽՀ Մոպրի Կենտկոմի

1935 թ. ԵՐԵՎԱՆ

18995
06 AUG 2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

15 JAN 2010
27 SEP 2006

Ե. Դ. ՍՏԱՍՈՎԱ

327.3
Ս-92
ար

# ՄՈՊՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ԶԵԿՈՒՑՈՒՄ
ՄՈՊՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

39776
1007
37682

Հրատարակություն ՀՍԽՀ Մոպրի Կենտկոմի

1925 Թ.
ԵՐԵՎԱՆ

ՀՍԽՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տեղարդի տպարան Լենինականում
պատվեր 2079, տիրաժ 1000 օր.
Գլավլիտ 227

Պատ. խմբագիր՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թարգմանիչ՝ Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԸՆԿԵՐՆԵՐ, ՅԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱՄ ՄՈՊՐԻ ԳՈՐԾԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ՍԿՍԱԾ ՄԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՑ, ԱՅՍԻՆՔՆ ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ՄԻ ՏԱՐՈՒՑ ՄԻ ՔԻՉ ԱՎԵԼԻ ԺԱՄԿԵՏԻ ՀԱՄԱՐ։

## ՄՈՊՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ դրության մեջ են գտնվում մեր կազմակերպությունները համաշխարհային կոնգրեսից հետո անցած ժամանակաշրջանում։

Ներկայումս ՄՈՊՐԻ արտասահմանյան սեկցիաներում կա 2.949.872 անդամ, սակայն այդ թիվն այնքան էլ ճիշտ չէ, վորովհետև չկան տվյալներ մի շարք կազմակերպություններից։ Համենայն դեպս կարելի յե ասել, վոր անշեղորեն շարունակվում ե անդամների աճը։ 1932 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 1933 թվականի հոկտեմբերի 1-ը 10 լեգալ սեկցիաներում անդամների թիվը 108.026-ից հասել ե 124.260-ի, այսինքն աճել ե մոտավորապես 15 տոկոսով։ 11 անլեգալ սեկցիաներից կան ավելի նպաստավոր տվյալներ. այստեղ անդամների քանակը 32.432-ից հասել ե 62.950-ի, այսինքն աճել ե 93,8 տոկոսով։

Այս տվյալները վերլուծելիս առանձին ուշադրության են գրավում հետևյալ կազմակերպությունները.—Կուբա կղզում ՄՈՊՐԻ կազմակերպության անդամների թիվը 2000-ից հասել ե 8000-ի։ Ճապոնական կազմակերպությունը, չնայելով վոր աշխատում ե սպիտակ տեռորի ամենադաժան պայմաններում, 7000 անդամից հասել ե 15000-ի։ ՄՈՊՐԻ Եստոնական փոքրիկ սեկցիան ավելի սակավ ծանր պայմաններում ե գտնվում։ Այնտեղ տեղ ե գտել հետևյալ փաստը.—սեկցիայի կենտրոնական կոմիտեյի մեջ սողոսկել ե մի պրովոկատոր, և այսպիսով ամբողջ կազմակերպությունը գտնվել ե վոստիկանության անմիջական հսկողության տակ։ Այնուամենայնիվ ՄՈՊՐԻ ես-

ռմանական սեկցիան, աշխատելով բացառիկ-ծանր պայմաններում, աճել է, անդամների թիվը 35-ից հասցնելով 150 հոգու։

Զգալի չափով աճել է Հունաստանի ՄՕՊՐի սեկցիան,—6500-ից հասել է 12.000 հոգու։ Բուլղարական սեկցիան—2.258-ից 5000 հոգու։ Լեհաստանի սեկցիան սպիտակ տեռորի չտեսնված պայմաններում 6.500-ից հասել է 9.500-ի։

Համեմատելով այդ թվերը լեգալ սեկցիաների աճման տվյալների հետ, կտեսնենք, որ նրանք յետ են մնում։ Շվեյցարիայում կար ՄՕՊՐի 4000 անդամ, դարձավ 4.248, այսինքն սեկցիան մեկ տարում ընդամենը 248 նոր անդամ է ընդունել։ Բելգիական սեկցիան, որ նույնպես լեգալ է, 7.000-ից հասել է 8.025 հոգու։ Իսպանական սեկցիան, որ գտնվում է հեղափոխության պայմաններում և մինչև ամենավերջին ժամանակներս լեգալ գոյություն ուներ, 30.000 հոգուց հասել է 37.800 հոգու։

Սակայն լեգալ սեկցիաներում էլ կան լավ աշխատանքի նմուշներ։ Օրինակ՝ Դանիայում ՄՕՊՐի սեկցիայի անդամների թիվը 450-ից հասել է 2000-ի։ Նորվեգիական սեկցիան, որ ըստ եյության շարունակ մնում եր նույն մակարդակի վրա, այժմ սկսում է աճել,—անդամների թիվը 200-ից հասել է 316-ի։

Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների սեկցիան, աշխատանքի հսկայական թափով հանդերձ, 10974-ից հասել է ընդամենը 12000 հոգու։

Ստացվում է այսպիսի պատկեր.—ընդունվում են նոր անդամներ, իսկ յերբ տրվում են վիճակագրական հանրագումարները, անդամների թիվը մնում է նախկինը։ Ճիշտ է, այդ յերևույթը տեղ ունի ոչ միայն ՄՕՊՐի աշխատանքի բնագավառում, այլև հեղափոխական արհմիությունների ու կոմկուսակցություններում։ ՄՕՊՐի սեկցիաներում գոյություն ունի անդամների զգալի հոսունություն, և ԱՄՆ սեկցիան ներկայանում է իբրև անսովոր հոսունության օրինակ։

Այսպիսով կազմակերպությունների աճման տեսակե-



տից առանձնապես փայլուն արդյունքներով պարծենալ մենք չենք կարող։

Ի՞նչպես է դրությունը սեկցիաների թվի նկատմամբ։

ՄՕՊՐն ավելացել է մի նոր սեկցիայով, որ կազմակերպված է Տիմոր կղզում։ Բացի դրանից, խմբակների ձևով փոքր բջիջներ են ստեղծված Բրիտանական Գվիանայում յեվ Իսլանդիայում։ Այժմ ՄՕՊՐի համաշխարհային կազմակերպությունն ունի 71 սեկցիա։

Սակայն ռեակցիայի ուժեղացումը և սպիտակ տեռորի աճը զգալիորեն անդրադարձան ՄՕՊՐի սեկցիաների դրության վրա։ Մինչև առաջին համաշխարհային կոնգրեսը կար 42 անլեգալ սեկցիա, իսկ այժմ անլեգալ սեկցիաների թիվն արդեն 49 է, և դրությունն այնպես է, որ անլեգալ սեկցիաների թիվն աճելու յե նաև հետագայում։ Այսպիսով առաջին կոնգրեսից հետո լեգալ սեկցիաների թիվը 28-ից իջել է 22-ի, մինչդեռ բոլոր սեկցիաների թիվն ավելացել է մեկով։

Ի՞նչպես են աշխատում ՄՕՊՐի արտասահմանյան սեկցիաները։ Արդյոք նրանք կատարում են համաշխարհային կոնգրեսի որոշումները մասսայական կազմակերպությունների մեջ թափանցելու մասին, մանավանդ այնտեղ, ուր մինչև այժմ գոյություն ունի կոլեկտիվ անդամություն։ Ի դեպ ասած՝ այս տարվա ընթացքում կոլեկտիվ անդամությունն աճել է չնչին չափով,—3,8 տոկոսով։ 1932 թվին ՄՕՊՐն ուներ 1.529.225 կոլեկտիվ անդամ, այժմ—1.586.662։ Այդ չնչին աճը ցույց է տալիս, որ մեր կազմակերպությունը դեռ չի սովորել ինչպես պետք է նոր կոլեկտիվ անդամներ ընդունել։ Միայն շատ քիչ սեկցիաներ կարողացել են կապվել, օրինակ, սպորտային կազմակերպությունների հետ, որոնք, ի դեպ ասած, հարկավոր դեպքում ագիտացիոն մեծ աշխատանք են կատարում։ Այսպես, օրինակ, յերբ հարկավոր եր մեծ կամպանիա ծավալել Սկոտսբորոյի պատանիների ազատագրման շուրջը, Միացյալ Նահանգների մեր ընկերները կարողացան օգտագործել սպորտային մի մեծ տոն և այդ տոնի ժամանակ—վազքի մրցությունները։ Յերբ վազքին մասնակցող սպորտ-

ամենները դուրս յեկան մրցարան և հանեցին վրայի հագուստը, նրանց մեջքերին յերևաց հետևյալ մակագրությունը.—«Ազատություն Սկոտսբորոյի 9 պատանիներին»։ Իհարկե, վոստիկանությունը վրա հասավ սպորտականներին բռնելու, բայց չէ վոր վերջիններս վազքի վարպետներ եյին և նախքան վոստիկանությունը կհասներ, նրանք կարողացան հսկայական տարածություն անցնել։ Պարզ է, վոր այս դեպքի վրա հասարակության ուշադրություն դարձրեց և հետաքրքրվեց Սկոտսբորոյի դատավարությամբ.—յեղավ այն, ինչ վոր պետք եր։

Յես այդ որինակը բերում եմ նրա համար, վորպեսզի ցույց տամ, թե ագիտացիոն նպատակով ինչպես կարելի յե հաջողությամբ ոգտագործել ամեն մի իրադարձություն։ Դժբախտաբար, մեր ընկերները խիստ անբավարար չափով են ոգտվում սպորտսմեններից։

Համաշխարհային կոնգրեսի վորոշումը արհմիություններում աշխատանքն ուժեղացնելու մասին, լինեն դրանք Ամստերդամի ինտերնացիոնալին հարող սոցիալ-դեմոկրատական միություններ, կամ անարխիստական, կամ նույնիսկ քրիստոնեական արհմիություններ,—մեր արտասահմանյան սեկցիաները դեռ շատ թույլ են կատարում։

Միակ բնագավառը, ուր շրջադարձ է յեղել, այդ ձեռնարկություններում հատարվող աշխատանքն է։ Մի շարք կազմակերպություններ վերակառուցեցին իրենց աշխատանքը,—գլխավորապես ձեռնարկություններում,—և այդ դրական մեծ արդյունք տվեց։ Այս առնչությամբ փայլուն որինակներ է ցույց տալիս Ճապոնիան։ Այնտեղ մեր ընկերները կարողացել են մտնել ձեռնարկությունները և անկասկած հաջողություններ են ձեռք բերել։ Միևնույնը պետք է ասել նաև Հունաստանի և մի քանի այլ սեկցիաների մասին։

Ընդհանրապես կարելի յե ասել, վոր կատարված է համաշխարհային կոնգրեսի այն դիրեկտիվը, վոր պետք է վերակառուցել աշխատանքը՝ ծանրության կենտրոնը փոխադրելով ձեռնարկությունները, վորպեսզի անլեգալ դրու-



թյան անցնելու դեպքում կարելի լինի շարունակել աշխա-
տանքի ծավալումը։
Աշխուժացել է նաև ծովագնացների մեջ կատարվող
աշխատանքը։ Կարելի յե առանձին հաջողություններ մատ-
նանշել խորհրդային սեկցիայի աշխատանքում։ Սակայն
ՍՍՀՄ նավահանգստներում, ծովագնացների մասին միշտ
են հաղորդում Գործկոմին, վորով վերջինս, անդամա-
րված ծովագնացների վերաբերյալ կոնկրետ նյութեր ու-
նենալով, այդ մասին կարող եր հաղորդել համապատաս-
ան սեկցիային և դրանով ընդհանրապես ուժեղացնել
սեկցիաների աշխատանքը։
Ահա և արտասահմանյան սեկցիաների նյութերը ծո-
վագնացների մեջ կատարվող աշխատանքի մասին։ Դա-
նիայի զանազան նավահանգստներում կան ՄՈՊՐի 6 խըմ-
բակներ։ Սրանցից ամենաուժեղը Կոպենհագենումն է, ունի
50 անդամ։ Այս բոլոր խմբակները մղել են ու շարունա-
ում են մղել միասնական կամպանիա Գերմանիայում
տիրող ֆաշիստական տեռորի դեմ և ծովագնացների Ին-
տերնացիոնալ Միության քարտուղար ընկ. Վալտերի
ազատության համար։ Ի դեպ, հաղորդում եմ, վոր մոտ
րերս ընկ. Վալտերը ազատված է բանտից (ծափա-
հարություններ)։
1934 թվականին այդ խմբակները մեծ ցույցեր կազմա-
կերպեցին սպիտակ տեռորի, մասնավորապես Գերմանի-
այում տիրող ֆաշիստական տեռորի դեմ։ Դանիայի ծո-
վագնացների հեղափոխական արհմիությունը, վոր բաղկա-
ցած է 4000 հոգուց, կոլեկտիվ կերպով մտավ ՄՈՊՐի
սեկցիան։
Շվեդիայում, Գետեբորգի նավահանգստում գոյու-
թյուն ունի ծովագնացների խմբակ։ Շվեդական սեկցիան
Գերմանիայում տիրող տեռորի և դարձյալ ծովագնացների
Միության քարտուղար ընկ. Վալտերի ձերբակալման
առնչությամբ խոշոր աշխատանք է կատարել Ստոկհոլմի
ծովագնացների ինտերնացիոնալ ակումբում։
Ֆինլանդիայում կա ծովագնացների ակտիվ խմբակ։

Դա նավահանգստային կոմիտե, վորն անցյալ աշնանը ծովագնացների գործադուլի ժամանակ, ակտիվ աշխատանք ե կատարել:

Հոլանդական սեկցիան աշխատանք ե կատարում Ռոտերդամի ծովագնացների մեջ: Նա ծովագնացների մեջ բողոքի միտինգներ ու ցույցեր ե կազմակերպել «Դե զեվեն պրովինսիեն»-ի դատավարության առնչությամբ և լույս ե ընծայել հատուկ մի բրոշյուր, վոր նվիրված ե այդ դատավարությանը[1]:

Մեր անգլիական սեկցիան, վոր առհասարակ շատ թույլ ե, կարող ե պարծենալ միայն մի բանով.—ծովագնացների մեջ կատարած աշխատանքով: Լիվերպուլի նավահանգստում, ուր սեկցիան աշխատում ե ծովագնացների խմբակի հետ միասին, մենք տեսնում ենք մի շատ բնորոշ որինակ, թե ինչպես ծովագնացների մեջ ՄՈՊՐԻ կազմակերպությունը կարող ե ոգտագործվել նույնպես շատ խոշոր մի գործի համար:

Կանադայում ձերբակալվել եր հարավ—սլավիական եմիգրանտ Կացիկը, կոմկուսակցության անդամ, վորն այնտեղ մեծ աշխատանք եր կատարում: Նա աքսորվելու յեր Հարավ—Սլավիա: Նրան նավ նստեցրին և ուղարկեցին Անգլիա: ՄՈՊՐԻ անգլիական սեկցիան վոչ մի կերպ չեր կարողանում կապ հաստատել նրա հետ: Այդ ժամանակ սեկցիան դիմեց Լիվերպուլի նավահանգստի ծովագնացների խմբակին, վորոնք համեմատաբար ավելի հեշտ մտան շոգենավը և մի գրություն հանձնեցին ընկ. Կացիկին: Այսպիսով հաջողվեց կապ հաստատել նրա հետ, վորից հետո բողոքի մեծ կամպանիա մղվեց: Ընկ. Կացիկը չհանձնվեց Հարավ-Սլավիային և ներկայումս գտնվում ե Խորհրդային Միության մեջ: Կարծես թե փոքր գործ ե, բայց այնպես մեծ հարց ե, մի հարց՝ թե ինչ պետք եր անել, վորպեսզի հեղափոխականներից մեկը չհանձնվեր Հարավ-Սլավիայի ֆաշիստական կառավարության, փրկվեր նրա կյանքը: Յեվ ՄՈՊՐԸ ծովագնացների կազմակերպության ոգնությամբ հաջողեցրեց այդ:

1. Հոլանդական նավատորմում, «Դե զեվեն պրովինսիեն» («յոթը գավառ») զրահակիր նավի վրա ծագած ապստամբության մասնակիցների դատավարությունը:



Կապիտալիստական այն բոլոր յերկրներում, վորտեղ կան ծովագնացների ինտերնացիոնալ ակումբներ, ինչպես որինակ՝ Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Շվեդիայում, Ֆրանսիայում և այլն, ՄՈՊՐԻ սեկցիաներն աշխատում են նրանց հետ միասին:

Այդ ժամանակվա ընթացքում ուժեղացել ե աշխատանքը նաև կանանց մեջ: Դժբախտաբար չի կարելի կոնկրետ տվյալներ բերել այն մասին, թե քանի կին ե ընդունված իբրև անդամ, քանի կազմակերպություն ե ստեղծված և այլն,—վորովհետև այդ տվյալները ճշտված չեն վիճակագրական կարգով: ՄՈՊՐԻ արտասահմանյան սեկցիաները, ինչպես և Խորհրդային Միության սեկցիաները, բավականաչափ չեն ըմբռնել, վոր «հաշվառքը,—այդ սոցիալիզմ ե»:

ՄՈՊՐԻ աշխատանքն ուժեղացել ե նաև ազգային փոքրամասնությունների մեջ: Աշխատանքը վատ չի ծավալված Ֆրանսիայում—Ելզաս Լոթարինգիայի ազգային փոքրամասնությունների մեջ, Իսպանիայում—կատալոնցիների և բասկերի մեջ, Լեհաստանի բելոռուսների և ուկրաինացիների մեջ:

## ԳՈՐԾԿՈՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանի վոր յես շոշափել եմ կազմակերպչական հարցերը, անհրաժեշտ եմ համարում կանգ առնել այն գծի վրա, վոր Գործկոմը կիրառել ե վերջին տարիներում,—այդ դիրեկտիվային բյուջեներին անցնելն ե և ֆինանսական աշխատանքի կապակցումը կազմակերպչական աշխատանքի հետ: ՄՈՊՐԻ սեկցիաները մեծ նվաճումներ ունեն նաև այս բնագավառում: Յեթե 1931 թվականին կար ընդամենը 6 սեկցիա,—դիրեկտիվային բյուջեյով, ապա 1932 թվականին կար արդեն 23 սեկցիա, այսինքն աճում գրեթե 4 անգամ, վոր անլեգալ աշխատանքի պայմաններում անկասկած մի մեծ քայլ ե դեպի առաջ:

Պետք է ասել, վոր մեզանում վոչ բոլոր սեկցիաներն են անցել դիրեկտիվային բյուջեյի: Գործկոմը բացառության թույլ տվեց 18 սեկցիաների համար, վորոնք գտնվում էին կոմիտեների վիճակում, դեռ չէին կարողացել ծավալել մասսայական աշխատանքը և այս պատճառով դեռ անկարելի յեր նրանց վերաբերմամբ կիրառել դիրեկտիվային բյուջեների մեթոդը: Այսպիսով դիրեկտիվային բյուջեներն ուղարկվեցին 42 սեկցիաների, իսկ հաշվետվություններ ստացված են 10 լեգալ և 13 անլեգալ սեկցիաներից: Լեգալ սեկցիաների հետ համեմատած՝ անլեգալ սեկցիաներում ավելի լավ վիճակում է վոչ միայն նոր անդամների ընդունելությունը, և այդ կայուն հողի վրա դնելը, այլև դիրեկտիվային բյուջեներով նախատեսված առաջադրությունների կատարումը:

Մեր կազմակերպություններում ինչպես է գնում անդամավճարների գանձումը: 10 լեգալ սեկցիաներում անհատական անդամավճարները միջին թվով գանձված են 60,7%, կոլեկտիվ անդամավճարները—47,4%-ով, մյուս բոլոր մուտքերը—73,3%-ով: Լեգալ սեկցիաներում յեկամուտների ամբողջ նախահաշիվը կատարված է 63,3%-ով:

Յես ձեզ խնդրում եմ, ընկերներ, ուշադրություն դարձնել այդ թվերի վրա, վորպեսզի հետո, յերբ լսեք մեր համամիութենական սեկցիայի հաշվետու զեկուցումը, կարողանաք այդ թվերը համեմատել մեր Միութենական սեկցիայում անդամավճարների և այլ մուտքերի գանձման տվյալների հետ:

ՄՈՊՐ-ի սեկցիաներն ինչպես են կատարել Գործկոմի առաջարկած դիրեկտիվային նախահաշիվը: Ոգնության բոլոր ձևերը, այսինքն բանտարկյալներին ցույց տրվող անմիջական ոգնությունը, քաղեմիգրանտներին ցույց տրվող իրավաբանական ոգնությունը և այլն,—10 լեգալ սեկցիաներում կատարված են 63,6%-ով, իսկ անլեգալ սեկցիաներում —81,1%-ով:

Այսպիսով դուրս է գալիս, վոր անլեգալ սեկցիաները, թեպետ աշխատում են խիստ ծանր պայմաններում, ավելի կարգապահ են, ավելի լավ են հասկանում ՄՈՊՐ-ի աշխա-



տանքի էությունը և ավելի լավ են կատարում այդ աշխատանքը, քան լեգալ սեկցիաները:

Կազմակերպչական, ագիտացիոն և վարչական ծախքերը լեգալ սեկցիաներում միջին թվով կատարված են 60,8%-ով, իսկ անլեգալ սեկցիաներում—68,9%-ով:

Գերակշռությունը դարձյալ անլեգալ կազմակերպությունների կողմն է: Արտասահմանյան 23 սեկցիաներում ոգնության բոլոր ձևերի նախահաշիվը կատարված է 75,5 տոկոսով: Ոգնության զանազան ձևերի նախահաշվի կատարումը հետևյալ պատկերն է ներկայացնում.— լեգալ սեկցիաները բանտարկյալներին անմիջական ոգնություն են հասցրել նախահաշվի 33,6 տոկոսով, իրավաբանական ոգնություն—22,8 տոկոսով, քաղեմիգրանտներին ոգնություն է ցույց տրված 4,6 տոկոսով: Անլեգալ սեկցիաներում բանտարկյալներին ոգնություն է ցույց տրված 76,1 տոկոսով, իրավաբանական ոգնություն—5,4 տոկոսով:

Այսպիսով անլեգալ սեկցիաներում ծանրության կենտրոնը հանդիսանում է անմիջական ոգնություն հասցնելը, այսինքն հենց այն առաջադրությունները, վոր ՄՈՊՐ-ի Գործկոմը սեկցիաներին տվել էր իբրև առաջին հերթի ու գլխավոր առաջադրություններ:

Ինչ վերաբերում է իրավաբանական ոգնության, ապա, ՄՈՊՐ-ի Գործկոմի ցուցումների համաձայն, այն կարող է ցույց տրվել ծախքերի նախահաշվի ընդամենը 20 տոկոսի սահմաններում: Գերմանական սեկցիան իրավաբանական ոգնության նկատմամբ պահպանել է Գործկոմի առաջադրած „լիմիտը“,—20,1 տոկոս: (Այդ յեղել է 1932 թվին, իսկ 1933 թվին առանձին պայմաններ են յեղել): Մինչդեռ Կանադայի սեկցիան իրավաբանական ոգնության համար ծախսել է նախահաշվի 48,2 տոկոսը, Միացյալ Նահանգների սեկցիան—34,4 տոկոսը: Այստեղ ՄՈՊՐ-ի Գործկոմը դարձյալ հանդիպում է նույն հին գծին, վորի դեմ նա պայքարում էր, բայց վորին դեռ վերջ չի տվել,—այն յերեվույթին, վոր Կանադայի ու Միացյալ Նահանգների սեկցիաները շատ խոշոր միջոցներ են ծախսում փաստաբան-

ներ հրավիրելու համար և շատ քիչ ուշադրություն են դարձնում մեղադրյալների ինքնապաշտպանության հարցերին։

Դիրեկտիվային բյուջեները կատարելու գործում աչքի յեն ընկնում հետևյալ սեկցիաները.—

Լեգալ սեկցիաներից առաջին տեղը բռնում է Շվեցարականը, որ բյուջեն կատարել է 91,4 տոկոսով, ապա Կանադայի սեկցիան՝ 77,3 տոկ., Միացյալ Նահանգները՝ 66,1 տոկոս, Գերմանական սեկցիան՝ 63 տոկոս, Ֆրանսիականը —57,8 տոկոս և այլն։ Անլեգալ սեկցիաներից առաջին տեղը բռնում է Արգենտինայի սեկցիան—91,3 տոկոս, Չինականը —79,2 տոկոս, Լատվիականը —67,2 տոկոս, Լեհականը—64,5 տոկոս, Ֆինլանդականը—61,3 տոկոս, Սիրիականը—57,6 տոկոս և այլն։

Դիրեկտիվային բյուջեները խիստ թույլ են կատարում Հունգարական, Ճապոնական, Մեքսիկական և Պորտուգալական սեկցիաները։

Դեռ անկարելի յե ասել 1933 թվի բյուջեի կատարման հանրագումարները, որովհետև մի շարք սեկցիաներ նյութեր չեն ուղարկել։ Համենայն դեպս, դատելով այն նախնական տվյալներից, որ մենք ունենք, յես բնավ չեմ կասկածում—և այդ կարելի յե մի անգամ ևս պնդել—որ դիրեկտիվային բյուջեներ մտցնելու վերաբերյալ Գործկոմի գիծն ամբողջովին արդարացրեց իրեն, որ մեր ընկերները հասկանում են այդ ձեռնարկման վողջ նշանակությունը և համապատասխան չափով վերակառուցում են իրենց աշխատանքը։

Այն անմիջական օգնության մասին, որ մոպրական կազմակերպությունները 1933 թվին հասցրել են հեղափոխության բանտարկյալ մարտիկներին, տվյալներ կան 19 լեգալ և անլեգալ սեկցիաներից։ Այդ 19 սեկցիաները 7 ամսվա ընթացքում իրենց յերկրներում բանտարկվածներին օգնություն են հասցրել 746.118 ֆրանսիական ֆրանկի գումարով։ Այդ ժամանակամիջոցում միջին թվով մի սեկցիայի ընկնում է 39.250 ֆրանկ օգնություն հասցնելու ծախս, իսկ մեկ ամսում—5607 ֆրանկ։



Ի՞նչ փոխհարաբերություն կա Գործկոմի ցույց տված օգնության և տեղական կազմակերպությունների օգնության միջև։ 1923 թվականին Գործկոմի ցույց տված օգնությունը կազմում էր 53,7 տոկոս, սեկցիաների՝ օգնությունը 43,3 տոկոս։ Այնուհետև մինչև 1925 թվականը աճում է կատարվում։ Գործկոմը տվել է 67,6 տոկոս, տեղական սեկցիաները հավաքել են 32,4 տոկոս։ Հետագայում, այն ուղղության ազդեցությամբ, որ Գործկոմը բռնել էր 1927 թվի միջազգային II կոնֆերանսից հետո, սեկցիաների առջև դրվեց մի խնդիր,—որքան հնարավոր է, գործել սեփական միջոցներով։ Գործկոմը ՄՈՊՐԻ սեկցիաներին մատնանշում էր, որ պատերազմի դեպքում, յերբ Գործկոմը չի կարողանա վորևէ օժանդակություն ցույց տալ, իսկ սեկցիաները չեն գործի իրենց սեփական միջոցներով, օժանդակության բացակայությունը կվիժեցնի կազմակերպությունը։ Կարիք յեղավ ուժեղ պայքար մղել այս ուղղությամբ։ Սկզբում շատ ընկերներ գտնում եյին, որ Գործկոմն ուղղակի ուզում է պահել փողերը, սակայն Գործկոմի կատարած քաղաքական աշխատանքն ունեցավ այն հետևանքը, որ սեկցիաները գիտակցեցին այդ վարքագծի ճշտությունն ու անհրաժեշտությունը։ Օրինակ՝ անցյալ տարի Ֆրանսիական սեկցիան ուղղակի հայտարարեց Գործկոմին.—„Յեթե մենք կարողացանք դառնալ մասսայական կազմակերպություն, յեթե մենք ֆինանսական տեսակետից ինքնուրույն ենք գործում, ապա դրանով մենք պարտական ենք Գործկոմին։ Յերբ մեզ այլևս նպաստ չտվին, մենք կարողացանք ամրապնդել մեր սեփական բյուջեն»։

Ահա Գործկոմի ֆինանսական քաղաքականության բնագավառում բռնված գծի արդյունքները։ 1932 թվականին Գործկոմը տվել է միջոցների ընդամենը 18,2 տոկոսը, իսկ սեկցիաներն իրենք հավաքել են 81,8 տոկոս։ 1933 թվականին դրությունը մի քիչ փոխվում է. Գործկոմը տվել է 26,7 տոկոս, սեկցիաները հավաքել են 73,3 տոկոս։ Այդ թվերի փոփոխության վրա ազդել է այն հանգամանքը, որ գերմանական սեկցիան անցել է անլեգալ դրության, վորով խիստ կրճատվել է նրա յեկամուտների նախահաշիվը։

Անցած 11 տարում,—1923 թվականից մինչև 1933 թիվը ներառյալ,—Գործկոմը սեկցիաներին հանձնել ե ընդամենը 7,732.020 ռուբլի, իսկ կազմակերպությունները հավաքել են 11.524.333 ռուբլի:

Իհարկե, այդ թվերը դեռևս շատ անբավարար են, դրանք վոչ մի կերպ չեն կարող բավարարել մոպրականներին, և բոլորովին պարզ ե, վոր ՄՈՊՐԻ կազմակերպությունները պետք ե ամեն կերպ ուժեղացնեն իրենց ֆինանսական գործունեությունը:

Իմ բերած ընդհանուր գումարից 11.797.452 ռուբլի ծախսվել ե քաղբանտարկյալներին անմիջական օգնություն ցույց տալու համար, 2,972.008 ռուբլի—իրավաբանական օգնության համար, 339.352 ռուբ.—մանկատների և 1,661.421 ռուբ.—քաղեմիգրանտներին օգնելու համար:

1934 թվականին դիրեկտիվային բյուջեները կազմելիս, Գործկոմը սեկցիաներին տվել ե հետևյալ ցուցումները.—

Լեգալ սեկցիաներն իրավունք ունեն կազմակերպչական ծախսեր անել վոչ ավելի, քան 15 $^0/_0$, կիսալեգալներն ու անլեգալները—7 տոկոս. ագիտացիոն—պրոպագանդիստական ու հրատարակչական նպատակներով լեգալ սեկցիաները—25 տոկոս, անլեգալ սեկցիաները—15 տոկոս. բոլոր ձևերի օգնության համար լեգալ սեկցիաները—50 տոկոս, անլեգալները—75 տոկոս: Լեգալ սեկցիաները Գործկոմին հատկացնում են 10 տոկոս, անլեգալները—3 տոկոս:

Անհրաժեշտ ե ընդգծել, վոր 1934 թվականի իր բյուջեն կազմելիս Գործկոմը առանձին կետում մտցրել ե հրատարակչական գործունեության հարցը: Մինչև հիմա մի շարք սեկցիաներում յեղել ե այն կարծիքը, թե քանի վոր հրատարակություններից վոչ մի յեկամուտ չի ստացվում, ուրեմն անհրաժեշտ ե միայն հրատարակչական ծախքերի բյուջե ունենալ:

Գործկոմը հարցը դրեց այսպես.—հարկավոր ե սեկցիաներին սովորեցնել, վոր հրատարակչական դրամարկղը բաժանեն կազմակերպությունների դրամարկղից, այսինքն անեն այն, ինչ վոր մենք անում ենք Խորհրդային Մի-



ությունում: Յուրաքանչյուր հրատարակչություն գիտե, վոր նոր որգանը կամ հենց նոր աշխատանք սկսող հրատարակչությունը մեծ փող են կլանում, վորոշ նպաստ են պահանջում, բայց և այնպես, գործը կանոնավոր դնելու դեպքում, վորոշ ժամանակից հետո նրանք պետք ե վորոշ յեկամուտ տան: Մենք չենք պահանջում, վոր յեկամտի գումարները մեծ լինեն, սակայն մենք պահանջում ենք, վոր ընկերները լրջորեն և ուշադրությամբ մոտենան այդ ծախքերին և թե պարբերական, թե վոչ-պարբերական հրատարակությունների վաճառքից վորոշ յեկամուտներ ստանալու հնարավորություններին: Մինչև այժմ ՄՈՊՐԻ կազմակերպություններն այս տեսակետից ինչ-վոր անհոգ վերաբերմունք են ցույց տալիս դեպի ՄՈՊՐԻ հրատարակությունները, նկատի ունենալով, վոր մոպրական գրականությունը ձրի յե բաժանվում: Գործկոմն անհրաժեշտ ե գտնում այլ մոտեցում ունենալ ՄՈՊՐԻ գրականության, կարծում ե, վոր այն պետք ե վաճառել, ուստի նա այժմ իր դիրեկտիվային նախահաշիվների մեջ մտցնում ե յուրաքանչյուր սեկցիայի հրատարակչության թե ծախքը և թե յեկամուտը:

Բացի ձեռնարկությունները մուտք գործելուց, ել ինչ խնդիրներ եր առաջադրել կոնգրեսը, վորպեսզի բարելավեր ՄՈՊՐԻ սեկցիաների ֆինանսական դրությունը:

## ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐ

ՄՈՊՐԻ կազմակերպությունների մասսայականության հարցը մեկն ե այն ամենալուրջ հարցերից, վոր համաշխարհային կոնգրեսը դրել եր ՄՈՊՐԻ բոլոր սեկցիաների առաջ: Պետք ե ասել, վոր ՄՈՊՐԻ կազմակերպությունները հիմնականում գլուխ բերին այդ խնդիրը:

Ահա կոնկրետ որինակներ, թե ինչով եր արտահայտվում այդ մասսայականությունը և ինչ կամպանիաներ մղեց ՄՈՊՐԸ այդ ժամանակվա ընթացքում:

ՄՈՊՐԻ անցկացրած խոշորագույն կամպանիաներից մեկը Սկոտսբորոյի կամպանիան եր: Այդ դեռևս չի վեր-

ջացել: Վճռաբեկության նոր բողոք տալու հետևանքով գործը նորից է քննվելու: Սակայն Սկոտսբորոյի պատանիներն առայժմ նստած են մահվան սպասողների կամերայում: Արդյոք ՄՈՊՐԻՆ կհաջողվի փոխել նրանց դրությունը և ինչ ուղղությամբ,—հիմա այդ դժվար է նախատեսել:

Սկոտսբորոյի կամպանիան զգալիորեն օգնեց ՄՈՊՐԻՆ ուժեղացնելու իր աշխատանքը նեգրական բնակչության մեջ: Համաշխարհային կոնգրեսին Տրինիդաս կղզուց ներկա յեր ընկ. Հենրին, որին կոնգրես եր ուղարկել Տրինիդատ կղզու նեգրական արհմիությունը,—մի կազմակերպություն, որը հարում է Ամստերդամի ինտերնացիոնալին: Այդ կազմակերպությունը պնդեց, որ նա մեկնի ՄՈՊՐԻ կոնգրեսին մասնակցելու,—հենց այն կամպանիայի շնորհիվ, որ ՄՈՊՐԸ մղում եր Սկոտսբորոյի պատանիների համար:

Հենրին չեր ուզում կոնգրես գնալ,—նա տիպիկ սոցիալ-դեմոկրատ եր: Սակայն արհմիութենական կազմակերպությունը նրան պարտավորեցրեց գնալ,—հաշվի առնելով ՄՈՊՐԻ վերաբերմունքը դեպի նեգրերը,—և այդ ճանապարհորդությունը հսկայական ազդեցություն թողեց Հենրու վրա: Նրա վրա ազդեց նախ՝ Խորհրդային Միության մեջ գտնվելը, այն ամենը, ինչ այստեղ նա տեսավ, յերկրորդ՝ կոնգրեսին մասնակցելը, որտեղ նա համոզվեց, թե ՄՈՊՐԸ ինչպիսի հսկայական աշխատանք է կատարում: Այդ նրան ստիպեց այլ կերպ մտածել պրոֆաշխատանքին, ստիպեց հենց այստեղ կապվել Պրոֆինտերնի հետ: Վերադառնալով տուն, նա Տրինիդատ կղզում ՄՈՊՐԻ իսկական կազմակերպություն ստեղծեց:

Յերկրորդ օրինակ: Բրիտանական Գվիանայում ու Հարավային Աֆրիկայում Սկոտսբորոյի դատավարության ազդեցությամբ ստեղծվեցին ՄՈՊՐԻ նոր կազմակերպություններ:

Յերրորդ օրինակ: Տիմոր կղզում ստեղծվեց մի բոլորովին նոր կազմակերպություն, ՄՈՊՐԻ կազմակերպու-



թյունները զգալիորեն ուժեղացան Մադագասկար յեվ Ֆիլիպպյան կղզիներում:

Ի՞նչ ճանապարհով եր մղվում Սկոտսբորոյի կամպանիան:

Բացի ամենուրեք յեղած մասսայական բողոքներից, մեծ աշխատանք կատարեց ՄՈՊՐԻ ամերիկական սեկցիայի քարտուղար, հանգուցյալ Ենգդոլը, որը Սկոտսբորոյի յերկու պատանիների մոր,—Ադա Ռայտի հետ շրջեց մի շարք յերկրներում: Նույն կամպանիան շարունակվեց Ամերիկայում, որտեղ Ադա Ռայտը շրջագայեց ամբողջ Միացյալ Նահանգներում: Գործկոմն Ամերիկայի Միացյալ Նահանգներից ստացել է և ստանում է մեծ քանակությամբ նյութեր, որ նա հետզհետե հրատարակում է և ուղարկում բոլոր յերկրները: Այսպես, Գործկոմը կապ ունի նեգրական 40 թերթերի հետ, որոնք հաճույքով տպում են Գործկոմի ուղարկած նյութերը Սկոտսբորոյի գործի մասին:

Սկոտսբորոյի կամպանիան առաջինն է, որ ՄՈՊՐԻՆ հնարավորություն տվեց մոտենալ նեգրերի լայն մասսաներին և ըստ եյության կատարել կոնգրեսի յերկու որոշումները,—ՄՈՊՐԻ աշխատանքի մասսայականության և նեգրական մասսաների մեջ մուտք գործելու մասին:

Յերկրորդ խոշոր կամպանիան, որ մղել է ՄՈՊՐԸ, այդ Գերմանիայում կատարված ֆաշիստական հեղաշրջումից հետո յեղած կամպանիան եր, գերմանական ֆաշիզմի զոհերին օգնելու կամպանիան:

Այդ կամպանիան կազմակերպելու համար Գործկոմն ընտրեց հատուկ հանձնաժողով, որին պարտավորեցրեց քարտուղարության յուրաքանչյուր նիստում, այսինքն յուրաքանչյուր տասնօրյակը մեկ անգամ, հաշվետվություն ներկայացնել իր աշխատանքի ընթացքի մասին:

Ի՞նչ ենք արել գերմանական կամպանիայի ընթացքում:

Նախ՝ մենք այդ կամպանիան սկսել ենք 1933 թվի մարտի սկզբից, այսինքն ռայխստագի հրդեհից անմիջապես հետո: Հենց այդ ժամանակ մենք ցուցումներ ենք տվել բոլոր սեկցիաներին—վերակառուցվել այնպես, որ-



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР

պեսզի բոլոր ուժերը նվիրվեն ՄՕՊՐ-ի գերմանական սեկցիայի պաշտպանությանը։

Յեվրոպական յերկրներում հունիսի 17-ից մինչև 25-ը և վոչ յեվրոպական յերկրներում հուլիսի 15-ից մինչև 23-ը մենք կազմակերպեցինք ինտերնացիոնալ համերաշխության շաբաթ։

Մենք կազմակերպեցինք ընկ. Դիմիտրովի քրոջ, փաստաբաններ Դեչևի, Գալպերի և Գրիգորևի, ինչպես և գերմանացի ազատված ընկերների (Տյուսց և Շտենցեր) կողմից ճանապարհորդություններ յեվրոպական մի շարք յերկրներում։

Մենք կազմակերպեցինք ընկ. Դիմիտրովի մոր ճանապարհորդությունը դեպի Բեռլին և Լայպցիգ ու նրա ժամանումը ԽՍՀՄ։ Նույն կերպ կազմակերպվեց նաև Տանևի կնոջ և Պոպովի հոր ճանապարհորդությունը։ Մենք կազմակերպեցինք Գերմանիա մեկնելու համար ինտերնացիոնալ պատվիրակություն, վորը 1933 թվականի ոգոստոսի 20-ին հավաքվեց Ամստերդամում, իր մեջ ունենալով Միացյալ Նահանգների, Անգլիայի և Հոլանդիայի ներկայացուցիչներին։ Այդ պատվիրակները մամուլի ներկայացուցիչների հետ հրավիրեցին կոնֆերանս, — նրանց չհաջողվեց Գերմանիա գնալ, վորովհետև թույլտվություն չստացան։

Այնուհետև մենք ստեղծեցինք հատուկ Միջազգային կոմիտե, Գերմանիայում կատարվող ֆաշիստական գազանությունների բոլոր սարսափները ուսումնասիրելու, մասնավորապես համակենտրոնացման ճամբարների դրությունն ուսումնասիրելու համար։ Առաջին կոնֆերանսը ականավոր իրավաբանների մասնակցությամբ տեղի ունեցավ 1933 թվականի դեկտեմբերի 8-ին, վորից հետո նրա ընտրված կոմիտեն սկսեց հավաքել բոլոր նյութերը և արտասահմանում միքանի լեզուներով կանոնավոր բյուլետեն հրատարակել։

Այնուհետև մեզ հաջողվեց մի շարք փաստաբաններ ուղարկել Լայպցիգի դատավարությանը մասնակցելու։ Վերջապես, Գործկոմի աշխատանքներից է նաև մի ամբողջ



շարք բրոշյուրների լույս ընծայումը, — «Ռայխստագի հրդեհը», «Ինտերնացիոնալ համերաշխությունը գերմանական պրոլետարիատի հետ», «Լայպցիգի դատավարությունը», «Դիմիտրովը դատարանի առաջ» և «Ամբողջ աշխարհի բանվորներն ու աշխատավորները պաշտպանում են գերմանական պրոլետարիատին»։

Ճիշտ է, այդ քիչ է, բայց և այնպես գործն առաջ գնաց, վորովհետև այդ բրոշյուրները լույս տեսան վոչ միայն գերմաներեն, այլ և ֆրանսերեն, անգլերեն ու իսպաներեն լեզուներով։

Ի՞նչ են արել մեր սեկցիաները գերմանական կամպանիայի առնչությամբ։ Բացի բողոքի կամպանիաներից, վոր նրանք մղում եյին և վորոնց ժամանակ յերբեմն ջարդվում եյին գերմանական դեսպանատների և հյուպատոսարանների ապակիները, — բոլոր կազմակերպությունները հսկայական քանակությամբ պահանջներ են ուղարկում Լայպցիգի դատավարությամբ մեղադրվողներին ազատելու մասին։ Միևնույն ժամանակ դրամական հանգանակություններ եյին կատարվում։ Այս կողմից առաջին տեղը բռնում է Ֆրանսիան, ուր մեր սեկցիան հավաքեց 300.000 ֆրանսիական ֆրանկ։ Շվեցարիայում հավաքված է 11.000 շվեցարական ֆրանկ, Միացյալ Նահանգներում — 2570 դոլլար, Անգլիայում — 600 ֆունտ ստերլինգ, Հոլանդիայում — 2500 գուլդեն, Դանիայում — 2500 կրոն, Չեխոսլովակիայում — 90.000 կրոն, Ավստրիայում մինչև արգելվելը, անցյալ տարվա մայիսին՝ 3000 շիլինգ, փոքրիկ Հունաստանում — 20.000 դրախմ և նույնիսկ Մադագասկարից ուղարկվել է 500 դոլլար։

Ավելի ևս բնորոշ է այն, վոր բանտերում գտնվող բազմաթիվ կալանավորներ ակտիվորեն մասնակցել են գերմանական ֆաշիզմի բանտարկված զոհերի համար կատարված հանգանակություններին (ծափահարություններ)։ Այսպես, «Դեյլիո» թերթում, — մեր հունական սեկցիայի օրգանում զետեղված եյին հետևյալ փաստերը. — Սիրոնոս բանտի (Աթենք) քաղբանտարկյալները բողոքում են և ուղարկում 400 դրախմ, Լարիսսի բանտի կալանավորները ուղարկում են 100 դրախմ, Թեսալիայի Օրենես բանտի քաղ-

բանտարկյալներն իրենց բողոքն են հայտնում և ուղարկում են 300 դրամ:

Խիստ կարևոր է մատնանշել նաև այնպիսի փաստեր, յերբ բուրժուական բանակներում կարմիր զինվորներն արձագանքում են օգնության կոչին (ծափահարություններ), ընդ որում այդ մասին առաջին տվյալները, ճիշտ թվերով հանդերձ, մենք ունենք հունական սեկցիայից. Միտիլեն կղզու 32-րդ հետևակ գնդի կարմիր զինվորները հայտնում են իրենց բողոքը և ուղարկում 186 դրամ, 16-րդ հետևակ գնդի զինվորները Մակեդոնիայից ուղարկում են 30 դրամ և այլն:

Իհարկե, դրանք խոշոր թվեր չեն, բայց ցույց են տալիս, թե Գերմանիայի դեպքերն ինչպիսի վիթխարի արձագանք գտան աշխատավորների սրտերում և վերջիններս ինչպիսի էնտուզիազմով հարեցին ֆաշիզմի դեմ պայքարելու ընդհանուր միասնական ֆրոնտին:

Գործկոմը տվյալներ ունի, որ իտալական բանակում նույնպիսի կամպանիա յե մղվել, կալանավորներին ուժերի ներածին չափ օգնություն է ցույց տրվել ֆաշիստական Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներում արգելափակվածներին:

Այդ կամպանիայի ժամանակ ՄՈՊՐի Գործկոմն ամենասերտ կերպով կապվել է Միջազգային իրավաբանական Միավորության հետ, որը 1929 թվականին ՄՈՊՐի նախաձեռնությամբ ստեղծվել եր արտասահմանում: Գործկոմին հաջողվեց Ֆրանսիայի և ուրիշ յերկրների փաստաբաններից համաձայնություն ստանալ Լայպցիգի դատավարությանը մասնակցելու համար, իսկ այդ փաստաբանների անունները մեծապես հռչակված են, օրինակ, Ֆրանսիայում-Կամպենչին, Մորո—Ջիաֆֆերին, Տորրեսը, Վիլլարը, Բերժերին, Մորիսը, Գարոնը, Հենրի Ժերոն, Ժան Շարլը, Լեգրանը, Պրիտտը: Նրանք աշխատում եյին Գերմանիա գնալու թույլտվություն ստանալ, սակայն այդ մերժվեց:

Ամերիկայում Գալագերը և Լևինսոնը համաձայնություն հայտնեցին մասնակցելու դատավարությանը: Լայպցիգի դատավարությանը մասնակցելուց հետո թե մեկը և թե մյուսը աքսորվեցին Գերմանիայից:



Բացի դրանցից, դատավարությանը մասնակցելու համաձայնություն հայտնեցին անգլիական յերկու փաստաբաններ,—Բեյլյուն և Պրիտտը, բուլղարական յերկու փաստաբաններ—Դեչևը և Գրիգորևը, Չեխո-Սլովակիայից մեկը,—Սեկանինան, Բելգիայից— Վերմեյլենը և Լեժուբը, Շվեցիայից—Բրանտինգը: Հոլանդաստանի հարյուրավոր փաստաբաններ ցանկություն հայտնեցին օգնություն ցույց տալ մեղադրյալ կոմունիստներին:

Այսպիսով ՄՈՊՐԻՆ հաջողվեց բավականաչափ մեծ կամպանիա ծավալել իրավաբանների մեջ: Իհարկե, յես վերցնում եմ միայն առանձին օրինակները, ընկերներ, որովհետև չկար մի յերկիր, որտեղից չստացվեյին փաստաբանների համաձայնությունը՝ մասնակցելու բողոքի այդ շարժմանը:

Միջազգային իրավաբանական միավորությունը Լոնդոնում կազմակերպեց հակա-դատավարություն, որի հետևանքով յերևան յեկավ հռչակավոր «Դարչնագույն գիրքը», որ ՄՈՊՐԸ վերահրատարակեց այստեղ, Խորհրդային Միության մեջ:

Լայպցիգի դատավարությանը անմիջականորեն մասնակցեցին յերեք փաստաբաններ,—Գալագերը, Վիլլարը և Դեչևը:

Միջազգային Միավորության մի շարք ներկայացուցիչներ դատավարությանը ներկա եյին սոսկ իբրև հյուրեր, և իհարկե ՄՈՊՐԻՆ իրազեկ եյին պահում, թե ինչպես է ընթանում դատավարությունը:

Այնուհետև, ամբողջ դատավարության ընթացքում մի շարք յերկրներում կազմակերպվեցին բողոքներ, միտինգներ և այլն: Այդպիսի բողոքներ կազմակերպվեցին Լոնդոնում, Փարիզում, Կոպենհագենում, Ամստերդամում և այլն: Իրավաբանական միավորության ամերիկյան սեկցիան մեծ կամպանիա մղեց Լայպցիգի դատավարության դեմ: Նա շատ ակտիվ և անմիջական մասնակցություն է

ցույց տալիս նաև Ծկոտաբորոյի դատավարության: Հենց Միջազգային Իրավաբանական միավորության նախաձեռնությամբ, ՄՕՊՐԻ Գործկոմի ու սեկցիաների օգնությամբ տեղերն են ուղարկվել փաստաբաններ, խոշոր դատավարություններին մասնակցելու,—Սիրիայում, Հնդկաչինում, Լեհաստանում, Ռումինիայում (Բուքարեստում, յերկաթուղայինների դատավարության առնչությամբ) և այլն:

Այնուհետև Իրավաբանական միավորության բելգիական սեկցիան ամենալայն մասնակցություն է ունեցել ամնիստիայի կամպանիային, որ 1932 թվականի դեկտեմբերին մղվեց Բելգիայում: Միավորության համապատասխան սեկցիան Բուլղարիայում ակտիվ մասնակցություն է ունեցել ամնիստիայի վերաբերյալ նոր օրենքի մշակման:

Իրավաբանական միավորության ամերիկական սեկցիան հրատարակում է մի բյուլետեն, որը տարածվում է 300 օրինակ և որի պահանջը շարունակ աճում է: Միավորության բուլղարական սեկցիան մեծ մասնակցություն ունեցավ բուլղարական 56 զինվորների վերջերս կայացած դատավարության, որոնցից չորսը մահապատժի դատապարտվեցին:

ՄՕՊՐԸ համարյա թե ոչ մի նյութ չեր ունենա շատ ու շատ դատավարությունների մասին, յեթե չմասնակցեյին այդ իրավաբանները:

Ծկոտաբորոյի կամպանիան ՄՕՊՐԸ մղել է նեգրական կազմակերպության հետ ամենասերտ կապ պահելով:

Յերկրորդ կամպանիան մղվել ու մղվում է մի այլ կազմակերպության—իրավաբանական միավորության ջերմ աջակցությամբ:

Յերրորդ կամպանիան կապված է Միրուտի դատավարության հետ, որն ավարտվեց 1933 թվին: Այստեղ ՄՕՊՐՆ աշխատել է հեղափոխական Հակաիմպերիալիստական Լիգայի հետ ամենասերտ կոնտակտ պահելով: Վերջինս շատ մեծ աջակցություն է ցույց ավել ՄՕՊՐԻՆ:

Նույն Հակաիմպերիալիստական Լիգան ֆրանսիական սեկցիայի հետ միասին մեծ կամպանիա յե մղել Հնդկա-



չինում թագավորող սպիտակ տեռորի դեմ: Մի ժամանակ ՄՕՊՐԻ ֆրանսիական սեկցիան այնքան զբաղվեց այդ կամպանիայով, որ մոռացավ Գերմանիայի պրոլետարների հանդեպ ունեցած իր պարտականությունները, և Գործկոմըն ստիպված եր ֆրանսիական սեկցիային կարգի հրավիրել, սովորեցնել, որ միաժամանակ յերկու կամպանիա մղի:

Առհասարակ, ՄՕՊՐԻ սեկցիաները դեռ չեն կարողանում ցուցաբերել բավականաչափ ճկունություն, միաժամանակ միքանի կամպանիա միավորելու և կազմակերպելու համար: Սովորաբար նրանք տարվում են կամ այս, կամ այն կամպանիայով, սկսում են մի բան անել, մյուսը մոռանալ և այս տեսակետից Գործկոմը հաճախ ուղղում է նրանց, հիշեցնում անում:

Մոռացվել է նաև ու միշտ բավականաչափ եներգիայով չի մղվել Ռուեգների ազատության կամպանիան: Ինչպես դուք գիտեք, չնայելով բոլոր ջանքերին, ՄՕՊՐԻՆ չհաջողվեց Ռուեգներին խլել գոմինդանական դատավորության ճանկերից: Նրանք դատապարտված են ցմահ բանտարկության, չնայելով իրենց բողոքներին, չնայելով Չինաստանում գոյություն ունեցող հատուկ կազմակերպության բողոքներին,—որի գլուխն է կանգնած հանգուցյալ Սուն-Յաթ-Սենի այրին՝—Սուն Ցզի-Լինը: Ոչինչ անել չհաջողվեց նրանց վիճակը թեթևացնելու համար: Չօգնեց նաև նրանց հայտարարած անոթադուլը: Մինչդեռ նրանց վերաբերմամբ խիստ ծանր ռեժիմ է գործադրվում: Չեր խանգարի, յեթե ՄՕՊՐԻ խորհրդային սեկցիան մի անգամ ևս կամպանիա մղեր Ռուեգների գործի առթիվ:

Ընդհանրապես ՄՕՊՐԻ սեկցիաները, որոնց թվում նաև Խորհրդային Միության սեկցիան, հակում ունեն մոռանալ Հեռավոր Արևելքը: ՄՕՊՐԸ լավ գիտե, թե ինչպես բուրժուազիան փորձում է ջախջախել հեղափոխական շարժումը Ճապոնիայում ու Չինաստանում, և այդ փորձերին ինչ դիմադրություն են ցույց տալիս չինական ու ճապոնական կոմունիստական կուսակցությունները

Մոպրը գիտե, թե ինչպիսի տեռոր է թագավորում այդ յերկրներում։

Այն զոհերը, վոր մեր ընկերները տալիս են Չինաստանում և Ճապոնիայում, բացառիկորեն ծանր են, բառիս լրիվ իմաստով դրանք միլիոնների յեն հասնում։ Նույնիսկ այն տվյալները, վոր մեզ հասնում են բուրժուական մամուլից (իսկ այդ տվյալներն անկասկած լրիվ չեն, վորովհետև բուրժուազիան շահագրգռված է ճշմարտությունը թագցնելով), խոսում են միլիոնավոր ու միլիոնավոր ընկածների մասին։

Յերբ լորդ Մարլեյը, վերադառնալով Շանհայից, անցնում եր Մոսկվայով, մենք տեսակցեցինք նրա հետ և խոսեցինք այն մասին, ինչ վոր նա տեսել եր ու լսել։ Ի միջի այլոց նա այսպիսի փաստեր եր բերում.—յերբ նրանց հաջողվեց մտնել չինական բանտերից մեկը, կալանավորներից մեկն ասաց, թե գիշերները անկարելի յե քնել, - կամերաներից ճիչեր են լսվում, այնտեղ մարդկանց ծեծում են ու տանջում։

Չինաստանում շարունակվում են միջնադարյան խոշտանգումները։ Հենց մահապատժի ձևն ել հրեշավոր է այնտեղ։ Գործադրվում է յերկու մեթոդ.—մեկն այն է, վոր ուղղակի խեղդում են, և այդ տևում է 4-ից մինչև 12 րոպե. յերկրորդ մեթոդը դանդաղ խեղդելն է,—մարդուն խեղդում են հետզհետե, այնուհետև թուլացնում կապը, հետո ելի խեղդում, ելի թուլացնում կապը, և այդ տանջանքը տևում է յերկար ու ձիգ ժամեր։ Մահապատժի այդ մեթոդի մասին վորոշ պատկերացում է տրվում ,,Մռնչա Չինաստան‘‘-ի բեմադրության մեջ։

Պետք է ուղղակի ասել, վոր մենք իսկապես չափազանց քիչ ուշադրություն ենք դարձնում մեր ճապոնական ու չինական ընկերներին։ Այս ուղղությամբ մենք պետք է ուժեղացնենք մեր աշխատանքը, մանավանդ վոր ճապոնաչինական պատերազմի հետևանքով անկասկած կավելանան զոհերը, -թե կռիվներում սպանվածները և թե ձերբակալվածները, կամ նրանք, վորոնք տեղն ու տեղը մահապատժի յեն յենթարկվում, յեթե կարմիրներ են լինում։



Յերբ մենք խոսում ենք Հեռավոր Արևելքի պատերազմի մասին, վոր ավելի և ավելի լայն է ծավալվում, բնականաբար ծագում է այն միտքը, թե մենք ինչ մասնակցություն ենք ցույց տալիս հակապատերազմական շարժման։

Դուք գիտեք, վոր յես Ամստերդամի կոնգրեսի կողմից ընտրված հակապատերազմական կոմիտեյի անդամ եմ, ուստի այդ տեսակետից մեր կապը բավականաչափ սերտ է։

Այդ կոնգրեսից հետո Կենտրոնական և Հարավային Ամերիկայի մեր սեկցիաները մասնակցեցին Մոնտեվիդեոյի հակապատերազմական կոնգրեսին, ինչպես նաև այն անլեգալ հակապատերազմական կոնգրեսին, վորը տեղի ունեցավ Շանհայում, լորդ Մարլեյի նախագահությամբ, և վորի մասին լորդ Մարլեյը զեկուցեց ԽՍՀՄ-ում, հակապատերազմական կոմիտեյի նիստում։

Մեր ընկերները մեծ մասնակցություն ունեցան յերիտասարդության հակապատերազմական կոնգրեսին, վորը տեղի ունեցավ անցյալ տարվա սեպտեմբերին, Փարիզում։

Այժմ մեր կազմակերպությունը սկսել է նախապատրաստվել կանանց հակապատերազմական կոնգրեսին, վոր յենթադրվում է գումարել իմպերիալիստական պատերազմի տարեդարձին,—1934 թվականի օգոստոսին։ 1934 թվի օգոստոսին լրանում է համաշխարհային սպանդի հայտարարման 20 տարին։ Մեր հակապատերազմական կոմիտեն ծրագրում է կազմակերպել կանանց հակապատերազմական կոնգրես,—վորոնք ավելի շատ են շահագրգռված բողոքելու այն նոր սպանդի դեմ, վոր պատրաստում են ամբողջ աշխարհի իմպերիալիստները։

ՄՈՊՐԸ միշտ անմիջական մասնակցություն է ունեցել հակապատերազմական որվան։ 1933 թվականի օգոստոսի մեկին 22 յերկրներ մասնակցեցին հակապատերազմական որը կազմակերպելուն։ Հնարավոր է, վոր ավելի շատ յերկրներ մասնակցած լինեն, սակայն մենք տեղեկություններ ունենք միայն 22 յերկրներից։ Ահա այդ յերկրները.—Լեհաստան, Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան Հունգարիա, Չեխո-Սլովակիա, Շվեցիա, Գերմանիա, Ավս-

լիա, Ֆրանսիա, Բելգիա, Իտալիա, Իսպանիա, Դանիա, Ֆինլանդիա, Լաթվիա, ԱՄՆ, Կանադա, Մեկսիկա, Կուբա, Շվեյցարիա և Հնդկաստան:

Հակապատերազմական որվան նախապատրաստվելիս խոշոր ցույցեր կազմակերպվեցին Ֆրանսիայում ու Նյու Յորքում և այդ ցույցերին մասնակցեց 15 հազար հոգի: Նյու-Յորքում հիմնական զեկուցում արավ Աշխատանքի Միջազգային պաշտպանության գլխավոր քարտուղարը,— այդպես է կոչվում Միացյալ Նահանգների մեր ՄՈՊՐի սեկցիան:

Խոշոր ցույց կայացավ Անգլիայում, Հայդ-պարկում:

Անցյալ տարվա ոգոստոսի մեկին լաթվիական բանտերի 6-ից մինչև 7 հազար քաղբանտարկյալները հենց այդ օրը բողոքի անոթադուլ հայտարարեցին քրեական ռեժիմ մտցնելու դեմ:

Հակապատերազմական որվա նախապատրաստության կապակցությամբ ֆաշիստական Գերմանիայում շատ ձերբակալություններ կատարվեցին:

Լեհաստանում ոգոստոսի 1-ի նախապատրաստության ժամանակ տեղի ունեցան բազմաթիվ ձերբակալություններ:

Պետք է նաև հիշել, վոր հենց 1933 թվի ոգոստոսի 1-ին մահապատժի յենթարկվեցին մեր գերմանացի ընկերներ Վոլֆը, Լյուտտենսը, Մյուլլերը և Տեշը:

Լյուտտենսի մասին յերեկ ձեզ պատմեց ընկ. Կնորինը: Թույլ տվեք հիշեցնել, թե ինչպես մեռավ Վոլֆը: Յերբ նրան հարցրին, թե ինչ է նրա վերջին ցանկությունը, նա ասաց իրեն շրջապատող ֆաշիստական դահիճներին.— «Յես միայն ուզում եմ մի քիչ շարժումներ անել», և յերբ արձակեցին նրա թևերը, նա ուժգին թափով ապտակ տվեց մոտիկ կանգնած ֆաշիստին:

Ընկերներ, ինչպես դուք գիտեք թերթերից, հակապատերազմական շարժումն ամենասերտ կերպով շաղկապված է հակաֆաշիստական շարժման հետ: 1933 թվականին Փարիզում տեղի ունեցավ հակաֆաշիստական կոնգրես, վորին ակտիվորեն մասնակցեցին մեր սեկցիաները: Այդ



կոնգրեսից հետո թե հակաֆաշիստական և թե հակապատերազմական կոմիտեների ներկայացուցիչները հղացան այն միտքը, թե ֆաշիզմի ու պատերազմի դեմ մղվող պայքարն այնքան միանման է, վոր նպատակահարմար չէ ունենալ յերկու կոմիտե, վոր հարկավոր է դրանք միացնել և այդպես էլ արվեց: Այնպես վոր, այժմ ըստ եյության չկա առանձին հակաֆաշիստական և առանձին հակապատերազմական կոմիտե, այլ գոյություն ունի միացյալ կոմիտե:

Սակայն դեռ մինչև այդ կոմիտեների միացումը մենք խիստ ակտիվ մասնակցություն ունեցանք մի ամբողջ շարք կոնգրեսների կազմակերպման, վորոնք գումարվում եյին Հռոմի վրա ֆաշիստական արշավանք գործելու տասնամյակի առթիվ: Պետք է ասել, վոր այդ հակաֆաշիստական կամպանիայում, մի շարք յերկրներում մեր սեկցիաները վերջին դերը չխաղացին:

Քանի վոր մենք խոսեցինք Իտալիայի մասին, թույլ տվեք, ընկերներ, ձեզ հիշեցնել յերկու կամպանիա, վոր մենք մղել ենք և շարունակում ենք մղել: Նախ՝ Գրամշիի ազատագրման կամպանիան: Ինչպես դուք գիտեք, ընկ. Գրամշին արդեն բավական յերկար ժամանակ գտնվում է բանտում: Նա նստած է իր համար վճռված ժամկետի կեսից ավելին: Նա լուրջ հիվանդ է, և իտալական օրենքների համաձայն, վատառողջ լինելու դեպքում պատժի կեսը կրելուց հետո պարտավոր են նրան ազատել: Վորովհետև Գրամշին կոմունիստ է, նրա վերաբերմամբ այդ չկիրառվեց: Մենք մեծ կամպանիա ծավալեցինք, վորի շնորհիվ հաջողվեց հետևյալը.— Գրամշիին տեղավորեցին կլինիկայում, ուր և գտնվում է հիմա, բայց այսպես թե այնպես դեռ նրան չեն ազատում:

Յերկրորդ կամպանիան, վոր մենք մղում ենք Իտալիայում, այդ շվեյցարացի ընկեր ՀՈՖՄԵՅԵՐի պաշտպանության կամպանիան է: Նա ձերբակալվել էր Իտալիայում ու բանտարկվել անասելի ծանր պայմաններում: Չնայելով շվեյցարական Կարմիր օգնության բոլոր փորձերին—ստիպել շվեյցարական կառավարության, վոր միջամտի այդ

գործին,—նրան շարունակում են պահել բանտում, թեպետ իտալական կառավարությունն ըստ էության վոչ մի մեղադրանք չի ներկայացրել Հոֆմեյերի դեմ. միակ մեղադրանքը, վոր ներկայացված է, այդ նրա կոմունիստ լինելն է: Այս պատճառով այժմ էլ նրան պահում են խիստ ծանր պայմաններում: Ընկ. Հոֆմեյերի առողջության դրությունն այնպես է, վոր ՄՈՊՐի Գործկոմն անհրաժեշտ է համարում հաջողեցնել նրա ազատվելը և վերջին ամիսների ընթացքում մենք ուժեղ թափով մղում ենք այդ կամպանիան: Կարծում եմ, վոր մեր խորհրդային սեկցիան էլ պետք է ուժեղացնի թե ընկ. Գրամշիի և թե ընկ. Հոֆմեյերի ազատագրման կամպանիան:

Բացի այդ կամպանիաներից, հիշեցնում եմ նաև ռումինական յերկաթուղայինների դատավարության առթիվ մղված կամպանիան: Ինչպես յես ձեզ ասացի, մենք այնտեղ փաստաբան ուղարկեցինք, և այդպիսով ի վիճակի եղինք այնտեղից ստանալու նյութեր, վորոնք թարգմանվեցին յեվրոպական լեզուներով և լույս ընծայվեցին իբրև բրոշյուր:

Վերջապես, մենք փաստաբան ուղարկեցինք Լուցկի դատավարությանը մասնակցելու: Դուք, ընկերներ, անշուշտ հիշում եք Լուցկի բանտի սարսափները, վորոնց մասին իր ժամանակին գրվել է բոլոր թերթերում. սարսափներ, վորոնց առթիվ նույնիսկ Լեհաստանի քաղաքական վոստիկանությունը չկարողացավ լռել և ստիպված յեղավ այդ առթիվ պատասխան տալ պարլամենտում:

Թույլ տվեք ինձ վորոշ նյութեր հաղորդել ձեզ այն մասին, ինչ վոր մեզ հասնում է դատական դահլիճից: Մեղադրյալ Կնոլը Լուցկի դատավարության ժամանակ պահանջում է հետևյալը.—«Ինձ հայտնի յե, վոր ամբողջ աշխարհի բանվորներից դատարանում ստացվում են բողոքի հեռագրեր ու բանաձևեր, խնդրում եմ դրանք կարդալ»: Դատարանը խորհրդակցում է ու վճռում չկարդալ, վորովհետև ընդամենը միքանի նամակ է ստացվել Ֆրանսիայից, այն էլ անստորագիր այնպիսի մարդկանցից, վորոնք դատավարության հետ վոչ մի առնչություն չունեն»:



Այդ ինչ է դուրս գալիս. մի կողմից՝ անստորագիր նամակներ, իսկ մյուս կողմից—«մարդիկ, վորոնք դատավարության հետ վոչ մի առնչություն չունեն»: Ուրեմն այնուամենայնիվ նամակները ստորագրված են և վոչ թե անստորագիր:

Յերկրորդ մեղադրյալ Բոլյավկան հաղորդում է.—

«...Այդ ժամանակ սկսեցին խփել գարշապարներիս: Այդ շատ յերկար տևեց: Գործակալներից մեկն ասաց.—«Դրա հետ պետք է չինական լեզվով խոսել»: Նա խփում էր սրունքներիս: Յես ճչում եյի: Այդ ժամանակ կեղտոտ լաթով փակեցին բերանս: Ծեծը շարունակվեց 10—15 րոպե: Յերբ յես այնուամենայնիվ վոչինչ չխոստովանեցի, խփեցին յերիկամունքներիս, ծաղրական հարց տալով—«ուր է քո յերիկամունքը»: Յերբ յես էլի վկայություններ չտվի, սկսեցին խփել կողերիս, գլխիս և պոկեցին մորուքս»...

Մեղադրյալ Պլատոնովան (կին գրող) Արևմտյան Ուկրաինայի կոմկուսին պատկանելը չի խոստովանում:

«Յես ուզում եմ պատմել, թե իմ ստորագրությունն ինչպես ընկավ վոստիկանական արձանագրության մեջ: Դրանք իմ վկայությունները չեն, այլ վոստիկանության և պրովոկատոր Կոզակի վկայություններն են: Նոյեմբերի 15-ին ինձ ձերբակալեցին Լվովում և տարան Լուցկ: Այստեղ սկսվեցին իմ և ուրիշ մեղադրյալների տանջանքները, վորոնց յես ականատես յեղա: Տկաչուկն ինձ թելադրեց այնպիսի վկայություններ, վոր յես չեյի ուզում տալ, քանի վոր դրանք սուտ եյին: Այդ ժամանակ Տկաչուկն ինձ սպառնաց, թե ինձ հետ խոսելու յե «Լուցկի լեզվով», յեթե ուզենա, ապա յես նույնիսկ կստորագրեմ, թե սպանել եմ նրան: Չեմ կրկնելու, թե այդ ժամանակ ինչ եյին անում ինձ հետ, վորովհետև այդ ամոթալի յե: Յերբ յես գիտակցությունս կորցրի, ինձ ուշքի բերին ու էլի սկսեցին ծեծել: Ռետինե մտրակով խփում եյին գարշապարներիս, գլխիս, ասեղներով խոցոտում եյին ինձ... Ծեծը շարունակվեց մոտ մի ամիս: Բոլկոն սպանվեց: Դեռ մինչև այսօր ականջներումս են նրա զարհուրելի ճիչերը—«զա-

բիյտե մենե» (սպանեցեք ինձ): Առավոտյան այդ ճիչերը դադարեցին»:

Մեղադրյալ Շեխտերի վկայությունները.—

«Ցերեկը և գիշերն առողջ մարդկանց տանում էին հարցաքննության, իսկ նրանք վերադառնում էին հիվանդ, գիտակցությունից զուրկ, տաքության մեջ... Յերբ ինձ բերին հարցաքննության, Տկաչուկը հանեց հարցաքննության պարագաները և հարցրեց, արդյոք չեմ «չոր», թե «թաց» վիճակում ալիքի խոստովանություններ անել: Միաժամանակ նա հանեց ծոցատետրը և սկսեց կարդալ մի շարք տվյալներ, որոնց ճշտությունը ես պետք է խոստովանեի: Ալշելով դրանից, ես սկսեցի նրան բացատրել, որ խոստովանել չեմ ցանկանում և չեմ կարող, թեկուզ այն պատճառով, որ նրա այդ ինֆորմացիաները մասամբ սխալ են: Այդ ժամանակ ինձ շղթայեցին, բերանս փակեցին, կոշիկներս հանեցին: Պատառիչը նստեց գլխիս ու սկսեց խփել: Միաժամանակ Տկաչուկը ռետինե մտրակով խփում էր գարշապարներիս: Դժվար է ասել, թե ինձ քանի հարված տվին և որքան ժամանակ ծեծեցին: Գուցե 80, գուցե 100 հարված... Միքանի անգամ ես կորցրի գիտակցությունս: Այնուամենայնիվ յերբ այդ ծեծը նրանց չօգնեց, յեկավ ևլի մի գործակալ, բերեց տաք ջրով լի մի աման ու ասաց.—«ՊՊԳ-ն (ռետինե ապրանքների գործարան) վերջացրինք, հիմա կսկսենք «պարագվայը»: Այստեղի լեզվով ՊՊԳ է կոչվում ռետինե մտրակներով գարշապարներին խփելը,—այնքան, որ դրանք ռետինի նմանվեն: «Պարագվայը—տաք ջրի ներարկումն է: Սակայն այդ չարվեց և հարցաքննողներից մեկն ասաց.—«Թողենք դրա հետ ուղղակի չինացոց լեզվով»: Ինձ մերկացրին և ռետինե մտրակներով սկսեցին խփել սեռական անդամներիս: Ցես անկարող եմ նկարագրել այդ ցավը, որը չկարողացա տանել: Ցես խոստովանեցի այն ամենն, ինչ որ նրանք ուզում էին»:

Այնուհետև նա ասում է.—

«Պոլոցկ ուղարկվելուց հետո ես դիմեցի բանտի բժշկին, ցույց տվի գարշապարներս, որոնցից կտոր-կտոր



պոկվում էր կաշին,—ծեծի հետևանքով: Բժիշկն ինձ պատասխանեց, որ դա կատարվում է ոտներս քրտնելու պատճառով, թեպետ այդ 1931 թվի հունվարին էր, իսկ այդ ամսում ոչ մի բանտում չի լինում այնքան շոգ, որ քրտնքէ պատճառով պոկվի ոտների մաշկը»:

Ահա ևլի տվյալներ Լուցկի դատարանից: Անձնական տվյալները ստուգելուց հետո խոսք է խնդրում մեղադրյալ Գավլիկը, որը նախագահից պահանջում է պատասխանել այն հարցին, թե ով է կալանավոր Բոյկոն: Նախագահը, առանց հարցին պատասխանելու, հրամայում է Գավլիկին հեռացնել դահլիճից: Մեղադրյալները ոտքի յեն կանգնում և բարձր ձայնով թաղման ուկրաինական յերգեր են յերգում ի պատիվ խոշտանգված Բոյկոյի:

Մեղադրյալ Գալինսկին դատարանում ասում է.—

«Լուցկում ծեծում են համարյա ամենուրեք և համարյա բոլորը: Այս փոքրիկ Լուցկը մեծ փառք և հռչակ ունի: Այստեղ ծեծում է պարոն դատավոր Բուրին, ծեծում է դատախազը»: (Նախագահ.—«Ձեզ զրկում եմ խոսքից, նստեցեք»): Գալինսկին այնուհետև ասում է.—«Յեթե քըննիչը ներկա յե լինում այնտեղ, ուր ծեծում են, ուրեմն նա յել է ծեծում»: Վոստիկանները նստեցնում են Գալինսկուն: Մեղադրյալները գոռում են՝ «Մի ծեծեք»:

Ընկերներ, ինչպես տեսնում եք, Լուցկում ծեծի սիստեմը շարունակվում է ոչ միայն նախնական քննության, ոչ միայն հետաքննության ժամանակ, այլև հենց դատարանում:

Այդպիսի բաներ մենք՝ դեռ յերբեք չենք տեսել, ուստի ես կարծում եմ, ընկերներ, որ այս դահլիճում պետք է կրկնեմ այն, ինչ որ ասել եմ Ուկրաինայի ՄՈՊՐի համագումարում,—մենք խիստ քիչ ուշադրություն ենք դարձրել Լուցկի դատավարության: Մենք պետք է ծավալենք այս կոմպանիան և Լուցկի դատավարությունը մերկացնենք նույն չափով, ինչ որ Լայպցիգի դատավարությունը: Այդ մեր ուղղակի պարտականությունն է:

Անցնում եմ Ամսերտայի դեպքերին: Դուք գիտեք, թե ինչ կատարվեց այնտեղ: Ցես միայն ուզում եմ ասել, որ

այդ դեպքերի լուրերը մեզ հասան թե չե, մենք լայն կամպանիա ծավալեցինք։ Մեր արտասահմանյան ներկայացուցչությունը սկզբում ուղարկեց 10000 ֆրանկ, կալանավորներին անմիջական օգնություն հասցնելու համար, հետո միջոցներ հատկացրեց փաստաբաններ ուղարկելու նպատակով, վորպեսզի այնտեղ, տեղում միջամտեյին գործին և ծավալեյին կամպանիան։

Արտասահմանում և այստեղ մենք բավականաչափ հարուստ նյութեր ենք ստանում այն մասին, թե ինչ է կատարվում Ավստրիայում և մեր կազմակերպությունները բավականաչափ յեռանդով արձագանքում են այդ դեպքերին։ Օրինակ, Ֆրանսիայում արդեն ստեղծված է օգնության կոմիտե։ Սա կապ է հաստատում ուրիշ կոմիտեների հետ, վորոնք կազմակերպված են փետրվարյան գործադուլի և ցույցերի ժամանակ տեղի ունեցած սպանությունների առնչությամբ։ Ֆրանսիական սեկցիան վորոշեց մանկատանը տեղավորել ավստրիական 20 մանուկ։ Ֆրանսիական սեկցիայի կենտկոմի վերջին նիստում հատկացված է 10000 ֆրանկ ավստրիական ընկերներին առաջին օգնությունը հասցնելու համար։

Իտալիայում մեր սեկցիան մի կոչ է բաց թողել և ամբողջ յերկրում դրամական հանգանակություն է կատարվում։

Իտալական քաղեմիգրանտների տասը ընտանիքներ, վորոնք ապրում են Ֆրանսիայում, ցանկություն են հայտնել ավստրիական յերեխաներ վերցնել դաստիարակելու համար։

Իսպանիայում կոչ է բաց թողնված և տեղի յե ունենում դրամական հանգանակություն։ Հեռագրական աշխատողների արհմիությունն ի պատասխան ՄՈՊՐ-ի կոչի վորոշեց իր վրա վերցնել ավստրիական բանվորների զավակների հոգատարությունը։

Անգլիայում ստեղծված է օգնության հատուկ կոմիտե և հանգանակության թերթիկներ են բաց թողնված։



Հոլանդիայում կոչ է բաց թողնված և դրամական հանգանակություն է կատարվում։

Շվեցարիայում լույս է ընծայված մի կոչ, կատարվում է դրամական հանգանակություն և ավստրիական մանուկներին ապաստան տալու համար հատուկ կամպանիա յե մղվում։

Սակայն պետք է ասել, վոր մեր սեկցիաները բավականաչափ յեռանդով չեն կատարում այդ աշխատանքը, նախաձեռնությունը չեն վերցրել իրենց ձեռքը. այստեղ ու այնտեղ սոցիալ-դեմոկրատները փորձում են օգտագործել ստեղծված դրությունը և իրենց ձեռքն առնել այդ ամբողջ կամպանիան։ Իսկ մեր ընկերները այնքան էլ յեռանդով չեն պայքարել նման բոլոր փորձերի դեմ, մասնավորապես բավականաչափ վճռականությամբ չեն պայքարել Ավստրիայում Մատեոտիի ֆոնդը վերակենդանացնելու սոցիալ-դեմոկրատական փորձերի դեմ։

Դրան հակառակ՝ մենք մեր սեկցիաներին ցուցմունքներ տվինք ստեղծել ինժեներ Վեյսելի անվան կոմիտե և ֆոնդ։

Համապատասխան կոմիտեն արդեն ստեղծված է, սակայն ցավոք սրտի մենք ուշ ենք լուր ստանում այն մասին, թե նա ինչպես է աշխատում, այս պատճառով առայժմ չենք կարող ասել, թե կոնկրետ ինչ է արված։

## ՄԱՄՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բացի իմ բոլոր ասածներից, մենք աշխատում ենք վոչ միայն մեր, այլ և բոլոր յերկրների բուրժուական մամուլին հասցնել այն տվյալները, վոր մենք ստանում ենք թե ավստրիական և թե մյուս բոլոր պրոցեսների մասին։ Ուստի թույլ տվեք անցնել այն հարցին, թե ինչպես ենք օգտագործում մեր մամուլը, ինչ ունենք և ինչպես ենք աշխատում այդ ուղղությամբ։

Համաշխարհային կոնգրեսի նախօրյակին մենք ունեյինք 27 լեզուներով 94 օրգան, այժմ ունենք 104 օրգան 28 լեզուներով։ Սրանցից 53 օրգանը լույս է տեսնում

լեզու և 51-ը — անլեգալ: 39-ը տպագիր հրատարակություններ են, իսկ մնացած 65-ը բազմացվում են ապակեգրով և այլ մատչելի միջոցներով:

Սակայն մենք մինչև հիմա ունենք 29 սեկցիա, — գլխավորապես մանր և անլեգալ, — որոնք դեռ չունեն իրենց մամուլի օրգանները:

Իբրև հաջողություն, կարելի յե մատնանշել, որ մի քանի յերկրներում հրատարակվում են մոպրական հատուկ պատի լրագրեր: Այսպես, պատի 3 լրագրեր ունենք Հոլանդիայում, միքանիսը — սկանդինավյան յերկրներում: Ռումինիայում, յերկաթուղայինների դատավարության ժամանակ, պաշտպանության կոմիտեյին հաջողվեց լույս ընծայել թերթի յերեք համարներ: Թերթը կոչվում եր «Պաշտպանության յերկաթուղայիններին»: Թերթը լույս եր տեսնում լեգալ, սակայն յերրորդ համարից հետո արգելվեց:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Կանադայում մամուլի համար հրատարակվում ե ինֆորմացիոն բյուլետեն, որը նյութեր ե հավաքում և ուղարկում խմբագրություններին: Այս նախաձեռնությունը խիստ արժեքավոր ե, որովհետեվ մի ամբողջ շարք թերթեր տպում են մեր նյութերը: Ահա թե ինչու մեր սեկցիաների պարտականությունն ե հոգ տանել, որպեսզի իրենց մոտ ևս լույս տեսնեն նույն տիպի բյուլետեններ: Իհարկե այդ կարող ե անել Գործկոմը, սակայն դա կապված ե խիստ շատ ժամանակ կորցնելու և ուշացման հետ: Այնուամենայնիվ Գործկոմը լույս ե ընծայում իր ինֆորմացիոն բյուլետենը և ամսական յերկու անգամ ուղարկում ե մեր բոլոր սեկցիաներին: Բացի դրանից, ծովագնացների համար մենք հատուկ բյուլետեն ենք լույս ընծայում: Ամբողջ մամուլին մենք առանձին հոդվածներ ենք տալիս ընթացիկ կամպանիաների շուրջը:

Ի՞նչ տիրաժ ունեն մեր թերթերը: Մինչև կոնգրեսը նրանց տիրաժը հասնում եր 203.000 օրինակի, իսկ ներկայումս ունենք 224.000 օրինակ, ընդվորում գերմանական սեկցիայի օրգանը այդ կողմից յետ մնաց, որով-



հետև անլեգալ դրության անցնելուց հետո նրա տիրաժը զգալիորեն պակասեց:

Այս ժամանակվա ընթացքում կարիք յեղավ վերակառուցել և մեր կենտրոնական օրգանը: Առաջ մեր կենտրոնական օրգանը, որ կոչվում ե «ՄՈՊՐ — Ցեյտշրիֆտ», լույս եր տեսնում գերմաներեն լեզվով: Այժմ մենք այն լույս ենք ընծայում ֆրանսերեն, որովհետև հաշվել ենք, որ այդպիսով կարող ենք մեծ թվով յերկրների սպասարկել: Սակայն թերթը փոքր տիրաժով կշարունակի լույս տեսնել նաև գերմաներեն:

## ՄԵՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Չի կարելի ջնջել այն մեծ պայքարը, որ մենք մղել ենք մեր զանազան հակառակորդների դեմ:

Անվիճելի յե, որ այդ պայքարը գլխավորապես սոցիալ-դեմոկրատների դեմ ե մղվել: 1932 թվականի աշունը, կամ ավելի ճիշտ՝ ձմեռը նրանք վերսկսեցին իրենց փորձերը մեր շարքերը ջլատելու համար: Դուք գիտեք, որ սոցիալ-դեմոկրատիայի այդ փորձերը կատարվել են անընդհատ, սկսած 1926 թվականից, այսինքն Մատեոտիի ֆոնդը ստեղծելու մոմենտից:

Այն ժամանակ, 1926 թվականին, առաջին անգամ զգալիորեն աճեցին մեր կազմակերպությունները, և ամբողջ աշխարհի համար պարզ եր, որ ՄՈՊՐԸ դառնում ե հասարակական խոշոր կազմակերպություն:

Մի տարի առաջ, յերբ մենք տալիս եյինք մեր կոնգրեսի հանրագումարները, — տալիս եյինք միանգամայն բացահայտ, կատարված մեծ աշխատանքի գիտակցությամբ, — սոցիալ-դեմոկրատների համար պարզ եր, որ մենք աճել ու դարձել ենք այնպիսի մի վիթխարի կազմակերպություն, որը պետք ե հաշվի առնել: Յեվ ահա սոցիալ-դեմոկրատները յերկրորդ անգամ փորձում են աշխուժացնել Մատեոտիի ֆոնդը: Գործկոմն իսկույն զգաց, թե որտեղից ե փչում այդ քամին, և իր կազմակերպություններին առաջադրություն տվեց՝ անհապաղ պայքար սկսել Մատեոտիի

ֆոնդի դեմ, քանի որ այդ ուրիշ բան չէ, բայց յեթե բուրժուազիայի դեմ բանվոր դասակարգի միասնական ֆրոնտը ճեղքելու ցանկությունը։

Վորովհետև մեր համագումարում շատ նոր ընկերներ կան, յես ուզում եմ ասել, թե ինչ է Մատեոտտիի ֆոնդը։ Մատեոտտին սոցիալ-դեմոկրատ եր, իտալական պարլամենտի անդամ, և մի գեղեցիկ որ չքացավ։ Ինչպես հետո պարզվեց, նրան ֆաշիստներն եյին սպանել։

Յերբ հարկավոր եր հարմար անուն գտնել Կարմիր օգնության դեմ ագիտացիա մղելու համար, սոցիալ-դեմոկրատիան ընտրեց այդ անունը և ստեղծեց Մատեոտտիի ֆոնդը։ Այդ ֆոնդի միջոցներից օգնություն է ցույց տրվում «դեմոկրատիայից զուրկ» յերկրների կալանավորներին։ Ինչարկե «դեմոկրատիայից զուրկ» ասելով մենք այդ բառերը չակերտների մեջ ենք առնում, իսկ նրանք գործը հասկանում են այնպես, վոր աշխարհում գոյություն ունեն միայն յերկու յերկրներ, ուր չկա դեմոկրատիա,—այդ ֆաշիստական Իտալիան է և իբր թե Խորհրդային Միությունը։ (Ծիծաղ)

Այսպիսով այդ ֆոնդը հատուկ նպատակով է ստեղծված։

Հիշեցնում եմ ձեզ, վոր 1931 թվականին, մինասարար—մենշևիկների հռչակավոր դատավարության ժամանակ, մենշևիկներից մեկը հայտարարեց, վոր նրանք հակախորհրդային աշխատանք կատարելու համար գերմանական սոցիալ-դեմոկրատիայից ստացել են 200 հազար մարկ։ Գերմանական սոցիալ-դեմոկրատները ժխտում եյին այդ, իսկ Դանը և Վանդերվելդեն բացահակ հայտարարեցին, թե այդ 200 հազար մարկը տրվել է Մատեոտտիի ֆոնդից։ Գուցե այս դեպքում Մատեոտտիի ֆոնդը միայն պատրվակ է յեղել, բայց և այնպես նա օգտագործվել է պարզապես հակահեղափոխական կազմակերպություններին օգնություն ցույց տալու համար։

Հիմա պարզ է, վոր արտասահմանյան սոցիալ-դեմոկրատներն ամեն կերպ օգտագործում են այդ Մատեոտտիի ֆոնդը, մեր շարքերը ջլատելու համար։ Նրանք հիմա Ավստրիայում աշխատում են կենդանություն տալ այդ ֆոնդին այն կամպանիայի առնչությամբ, վոր մենք սկսել



ենք մղել ավստրիական դեպքերի շուրջը։ Նրանք խիստ մեծ կամպանիա յեն մղում, վորպեսզի փողը մտնի իրենց դրամարկղը։ 1932/33 թվ. ձմռանը սոցիալ-դեմոկրատները հայտարարում եյին, թե անհրաժեշտ է օգնություն ցույց տալ „մեր“ կալանավորներին, „մեր“ բառի տակ հասկանալով յուրայիններին,—սոցիալ-դեմոկրատներին, այնինչ հենց դրանով վերջիններիս հակադրում եյին կոմունիստ և անկուսակցական բանվորներին։

Հեղափոխական մարտիկներին օգնող Միջազգային կազմակերպություն ստեղծելու հենց սկզբից մենք օգնություն եյինք ցույց տալիս առանց կուսակցական և ազգային խտրության,—այն բոլոր դեպքերում, յերբ տվյալ մարդը լինում եր հեղափոխական մարտիկ, դուրս եր գալիս բուրժուական հասարակակարգի և ֆաշիզմի դեմ։ Մինչդեռ սոցիալ-դեմոկրատներն ուզում են միայն իրենք իրենց օգնություն հասցնել։

Յերբ մենք տեսանք, վոր այդ դարբնի աշխատանքն աշխուժանում է, մեր օրգաններում հրապարակեցինք մի շարք հոդվածներ, հետո մի քանի հոդվածներ էլ ուղարկեցինք բուրժուական մամուլին։

Միմիայն սոցիալ-դեմոկրատիայի դեմ չէ, վոր մենք պայքարում ենք հիմա։ Բելգիայում տրոցկիստները իրենք փորձում են ջլատել մեր կազմակերպությունը։ Բելգիայում նույնպիսի դրություն եր տիրում 1928 թվականին, յերբ հարկավոր յեղավ փոխել բելգիական Կարմիր օգնության ամբողջ ղեկավարությունը։ Չգիտեմ հիմա այդ ինչով կվերջանա, սակայն դրությունն ըստ յերևույթին խիստ լուրջ է։ Արտասահմանի մեր ներկայացուցչությունն արդեն ձեռնամուխ է յեղել այն սխալներն ուղղելուն, վոր թույլ եր տվել մեր բելգիական սեկցիան։

Նորից աշխուժացել է այն կազմակերպությունը, վոր աջակողմյանները Գերմանիայում ստեղծեցին 1928 թվականին, „Օգնության միջազգային միավորություն“ անունով։ Նրանք հիմա իբրև էմիգրանտներ գտնվում են Շվեյցարիայում և փորձում են վերստեղծել այդ կազմակերպությունը։

## ԿԱԴՐԵՐ ՅԵՎ ՀՈՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Յեթե մենք հիմա դիտենք մեր աշխատանքը,—վորի մասին յես խոսեցի,— կազմակերպչական, ագիտացիոն և զուտ քաղաքական բնագավառներում կատարվող աշխատանքը, ապա պետք է հանգենք այն յեզրակացության, վոր մեր առաջ դրված է մի մեծ խնդիր,—ստեղծել և դաստիարակել բավականաչափ թվով և ուժեղ կադրեր, մեր սեկցիաներում աշխատելու համար։

Դժբախտաբար մենք դեռ չունենք բավականաչափ թվով այդպիսի կադրեր, և յես ՄՕՊՐի Գործկոմի Ֆրակցիայի անունից Կոմինտերնի XII և XIII պլենումներում առիթ ունեցա խոսելու այն մասին, վոր մեր կադրերը թույլ են, վոր անհրաժեշտ է լավագույն աշխատողներ տրամադրել ՄՕՊՐին, քանի վոր հաճախ մեզ տալիս են այնպիսիներին, ովքեր այնպես պետք չեն կուսակցական աշխատանքի համար, կամ վորևէ շրջանում գլուխ չեն բերում այդ աշխատանքը և այլն։

Մեր աշխատանքի այդպիսի թերագնահատումը մենք մեծ սխալ ենք համարում, և հիմա, ընկերներ, արտասահմանյան կուսակցությունները սկսում են հասկանալ այդ։ Վորովհետև մեր սեկցիաները հնարավորություն չունեն հատուկ դպրոցներ ստեղծել հարկավոր կադրեր պատրաստելու համար, ուստի նրանք ընկերներին ուղարկում են ՄՕՊՐի Գործկոմի ապարատ, ժամանակավոր ուսուցման համար։ Այս տեսակետից մենք խիստ լավ արդյունքներ ենք ստացել։

Վերջերս մեզ մոտ աշխատեց ՄՕՊՐի շվեդական սեկցիայից մի ընկեր։ Հիմա նա վերադարձել է իր հայրենիքը։ Միանգամայն պարզ է, վոր նրա վերադառնալուց հետո սեկցիայի գործունեությունը պետք է խիստ ուժեղանա։ Մենք ունենք անլեգալ սեկցիաներից յեկած ներկայացուցիչներ, վորոնք վերադառնալով իրենց տեղերը, ուժեղացնում և աշխուժացնում են մեր աշխատանքը։

Այնուամենայնիվ մեր կադրերը դեռ հեռու յեն կատարելությունից և մենք անշուշտ պետք է դրա վրա բավա-



կանաչափ լուրջ ուշադրություն դարձնենք։ Մենք ոգտվում ենք ամեն մի առիթից, ամեն մի հնարավորությունից, վորպեսզի մեր ընկերներին ցուցմունքներ տանք, թե ինչպես պետք է կատարել ՄՕՊՐի աշխատանքը։

Մենք կարծում ենք, վոր կադրերի դաստիարակության և ուժեղացման վրա խիստ բացասաբար ազդող, ամենամեծ թերություններից մեկը մեր կազմակերպության հոսունությունն է, այսինքն այն յերևույթը, վորից մի ժամանակ տառապում եր նաև մեր խորհրդային սեկցիան։

Մենք կարողանում ենք լայն կամպանիայով, ագիտացիայով համակրանքի հոսանք ստեղծել, առաջ բերել բողոքի տրամադրություն, ստեղծել մարդկանց այնպիսի հոգեվիճակ, վոր ձեռնարկություններում կամ հիմնարկներում հայտարարեն, թե առանց բացառության բոլորը մտնում են ՄՕՊՐի շարքերը, ինչպես այդ տեղի յե ունենում գիցուք այժմ, ավստրիական դեպքերի կապակցությամբ։ Այնուհետև անցնում է վորոշ ժամանակ, և հենց այն նոր ուժերը, վոր մենք հավաքագրել եյինք, գործերից հեռու յեն լինում։ Լինի այդ արհեստակցական կազմակերպություն, լինի այդ ՄՕՊՐԸ կամ վորևէ այլ կազմակերպություն,— չի կարելի սահմանափակվել միայն նոր անդամների հավաքագրումով, անդամավճարները գանձելով և դրանով հանգստանալ։ Դուք յերբեք չեք պահպանի և ամրապնդի ձեր շարքերը, յեթե ամեն մեկին չտաք վորոշ աշխատանք, վորոշ առաջադրություն։

Ցավոք սրտի, արտասահմանի մեր սեկցիաները դեռ չեն սովորել սիստեմատիկ մասսայական-դաստիարակչական աշխատանք կատարել և ընդունելով նոր անդամներ, արագությամբ կորցնում են դրանց։ Քանի վոր այդ այդպես է, ել ումից պետք է կադրեր ստեղծվեն։ Ընդունվում են նորանոր անդամներ, իսկ հները չեն պահպանվում։ Այսուհետև մենք պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք նաև այս կողմի վրա, և այն բոլոր նամակներում ու ցուցմունքներում, վոր մենք ուղարկում ենք մեր կազմակերպություններին, մենք շարունակ անդրադառնում ենք այս հարցին։

Մեր ուժերի հաշվառման գործում յեղած թերությունները նույնպես մեկն են այն պատճառներից, վորոնք բացասաբար են ազդում մեզ անհրաժեշտ կադրերի հայտնաբերման վրա։ Սկզբում յես ասացի, վոր ընկերները հաճախ թերագնահատում են հաշվառքը։ Դեպի անդամների հաշվառքը նույնպես անհոգ վերաբերմունք են ցույց տալիս նաև մեզանում, Խորհրդային Միության մեջ, կարծելով թե դա միայն ձևականություն է։ Մինչդեռ ըստ եյության դրանով ընկերները խոստովանում են, թե չեն ճանաչում իրենց ուժերը։

Յես ձեզ հիշեցնում եմ, վոր մի ժամանակ, յերբ մենք աշխատում եյինք ընդհատակում, համոզված եյինք, վոր մայիսմեկյան ցույցերի կազմակերպումը մեր ուժերի ստուգումն է և հաշվառքը; այն հաշվառքը, թե մենք վորքան և ինչպիսի մասսաներ կարող ենք փողոց դուրս բերել։ Այժմ արտասահմանյան յերկրներում մայիսմեկին փողոց դուրս բերելը մեր ուժերի նույնպիսի հաշվառք է և աշխատելու կարողության ցուցանիշ։

Ցավոք սրտի մեր սեկցիաները բավականաչափ չեն ըմբռնում այդ։ Շատ ընկերներ նույնպես չեն հասկանում այն պահանջների խոր նշանակությունը, վոր մենք առաջադրում ենք մեր սեկցիաներին, սրանց աշխատանքի հաշվետվության նկատմամբ։

Այստեղ գրեթե ամեն անգամ նույն պատկերն է կրկնվում։ Այ, օրինակ, մոտ օրերս մեր բոլոր սեկցիաները մասնակցեցին կանանց միջազգային օրվա,—մարտի 8-ի տոնակատարությանը։ Իսկ թե նրանք ինչպես անցկացրին այդ օրը, ինչ ժողովներ գումարվեցին, քանի հոգի յեն անդամագրված, վորքան դրամ է հավաքված,—այս տվյալներին պետք է սպասել ամիսներով, միքանի անգամ հիշեցնել և վերջիվերջո այնուամենայնիվ վոչ բավականաչափ լրիվ պատասխան ստանալ։

Յուրաքանչյուր կամպանիայի ժամանակ հարկավոր է միշտ հիշեցնել, թե անհրաժեշտ է հաշվետվությունը ներկայացնել իր ժամանակին։ Այնուամենայնիվ մինչև այժմ չենք վերացրել ուշացնելու այդ վատ սովորությունը,



կազմակերպությունները չեն հասկացել, վոր մեզ ուղարկած բոլոր տվյալներն ոգնում են մեր ինտերնացիոնալ աշխատանքի ուժեղացման, նպաստում ինտերնացիոնալ կապին, նպաստում աշխատանքի այն բնագավառին, վորը ցես բավականաչափ ուղիղ չէ, վորը ծավալել է հարկավոր։

Այստեղ անհրաժեշտ է միքանի խոսք ասել նաև Գործկոմին կից՝ ինտերնացիոնալ կապի բաժնի մասին։ Նա դեռևս խիստ վատ է աշխատում։ Ինչումն է բանը։ Ահա թե ինչում։ Յերբ մենք խոսում ենք մեզանում, Խորհրդային Միությունում յեղած ինտերնացիոնալ կապի մասին, մենք կարող ենք հիշել նաև այն բոլոր պատվիրակությունների քանակությունը, վորոնք յեղել են մեզանում, և այն նամակների քանակությունը, վորոնք ուղարկված են արտասահման. մենք կարող ենք հիշել նաև այն բանասրի թիվը, վորոնց վրա շեֆություն ենք վերցրել և այլն։ Բայց ահա, յեթե հարցնենք Գործկոմի ինտերնացիոնալ կապի բաժնին, նա չի կարողանա ձեզ հաղորդել այդ տվյալները։ Բայց միթե հետաքրքրություն և քաղաքական մեծ նշանակություն չունեն այն թվերն ու նյութերը, թե արտասահմանում քանի պայմանագիր ունենք հեղափոխական մրցության մասին և ինչպես է կատարվում այդ հեղափոխական մրցությունը, այդ ուղղությամբ ինչ թերություններ և աշխատանքի հաջող ձևեր կան։ Գործկոմի ինտերնացիոնալ կապի բաժնում այդ մասին դուք վոչ մի տվյալ չեք ստանա։

Յեթե մենք հարցնենք Գործկոմի ինտերնացիոնալ բաժնին, թե ասացեք խնդրեմ, քանի շեֆեր ունեք, ինչ բանտերի վրա, ինչ յերկրներում,—ապա այդ հարցին նա ձեզ պատասխան չի տա։ Ուստի այն տվյալները, վոր յես ձեզ կհաղորդեմ շեֆական աշխատանքի մասին, խիստ աղքատ կլինեն։ Օրինակ, յես կարող եմ ձեզ հաղորդել, վոր Ֆրանսիայի կարմիր ոգնության խմբակը շեֆություն է վերցրել Հնդկա-Չինի, Մադագասկարի, Սիրիայի, ինչպես նաև Բուլղարիայի ու Լեհաստանի քաղբանտարկյալների վրա, բայց թե վոր բանտերի, այդ ինձ չկարողացան ասել ինտերնացիոնալ կապի մեր ընկերները։

Սահմանափակվում եմ առանձին փաստեր բերելով։ «Դեֆանսում»,—ֆրանսիական Կարմիր Օգնության օրգանում, տպվել եյին Հնդկա-Չինի և Մադագասկարի քաղբանտարկյալների նամակները, վորոնցով նրանք շնորհակալություն են հայտնում իրենց ցույց տրված օգնության համար։

Միքանի շեֆեր բաց են թողնում փոստային բացիկներ,—այն քաղբանտարկյալների լուսանկարներով, վորոնց վրա նրանք շեֆություն են վերցրել։

Միացյալ Նահանգների մեր կազմակերպությունը շեֆություն է վերցրել Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի յերկրների մի ամբողջ շարք բանտերի վրա, բայց թե վոր բանտերի,—դարձյալ տվյալներ չկան։ Կանադայի սեկցիան շեֆություն է վերցրել Սալվադորի ՄՕԳՐի սեկցիայի վրա։

Ահա այն բոլոր տվյալները, վոր յես ունեմ։ Յես կարծում եմ, վոր վնասակար չէր լինի, յեթե Խորհրդային Միության մեր սեկցիան Գործկոմից պահանջեր ուժեղացնել աշխատանքը ինտերնացիոնալ կապի ասպարեզում, այն հաշվով, վոր դուք ձեր աշխատանքի համար կարողանաք անհրաժեշտ տվյալներ ունենալ բուրժուա-ֆաշիստական բանտերի, սրանց ռեժիմի, քաղբանտարկյալների քանակության մասին։ Յես կարծում եմ, վոր ԽՍՀՄ սեկցիայի այդ ճնշումը ազդեցություն կունենա մեր ինտերնացիոնալ սեկտորի վրա, այլապես հազիվ թե գործը տեղից շարժվի։

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հեղափոխական մրցության վրա։ Այստեղ գործը միևնույն չափով վերաբերում է թե մեզ,—Խորհրդային սեկցիային, և թե մեր արտասահմանյան սեկցիաներին, վորովհետև հեղափոխական մրցության մասին կնքված պայմանագրերի հաշվառքը չափազանց վատ հիմքերի վրա յե դրված։

Բերեմ որինակներ։ Մեր համաշխարհային կոնգրեսի ժամանակ հեղափոխական մրցության պայմանագրեր կնքվեց Բելգիայի և Սմոլենսկի (արևմտյան մարզ) միջև։

Արևմտյան մարզի ընկերներ, նեղություն քաշեցեք



հաղորդել մեզ, թե դուք ինչ եք արել այդ պայմանագիրն իրացնելու համար։ Յես կարող եմ վաղորոք ասել, վոչինչ։ Բելգիայից վոչ մի տվյալ չստացանք և այնտեղ վոչ մի նամակ ու հարցում չուղարկեցինք։ Մի խոսքով, կոնգրեսի ժամանակ պայմանագրի թուղթը գրեցիք, միասին նկարվեցիք, ձեզ հավերժացրիք լուսանկարով և դրանով վերջացրիք։ Յերևում է, վոր ձեր կարծիքով այդ է հեղափոխական մրցությունը։

Վերցնենք մի ուրիշ որինակ։ Ահա Լենինգրադի մեր կազմակերպությունը։ Նա էլ է մրցում, իսկ ինչ ցուցանիշներ ունի մրցությունը։ Թույլ տվեք ասել՝ վոչինչ։ Յեթե վորևե բան ձեզանում արված էլ լինի, այդ մասին մեզ տեղեկություն չեք տվել, համապատասխան սեկցիայից տվյալներ չեք պահանջել և դեռ «սայլն այնտեղ է բեռնովը»։ Նույն դրությունն է նաև մի ամբողջ շարք ուրիշ կազմակերպություններում։ Կենտրոնական Կոմիտեյի վերաբերյալ մեր զեկուցման մեջ դուք այդ մասին կը լսեք։ Մենք պետք է ուժեղացնենք այդ աշխատանքը և ընդհանրապես շեֆական աշխատանքը։

## ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ

Թույլ տվեք պերճախոս թվեր բերել սպիտակ տեռորի մասին։

1925 թվ. հունվարի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը սպիտակ տեռորի զոհերի ընդհանուր թիվը հասել է 6.021.961-ի։ Միմիայն 1933 թվականին սպիտակ տեռորի զոհ են դարձել 1.522 208 հոգի։ Այդ թվում (1933 թվականին) ձերբակալվել են 508.488 հոգի, թեթև ու ծանր վիրավորվել 460.612 հոգի, սպանվել 429.722 հոգի։ Համեմատեցեք դատարանով մահապատժի յենթարկվածների թիվը՝ 733 հոգի,—և մինչև դատավճիռը կամ առանց դատարանի սպանվածների թիվը 429.722 հոգի։ Բանտարկության են դատապարտված 50.653 հոգի, այսինքն համարյա թե ձերբակալված 580.488 հոգու տասնորդ մասը։

Այդ տարվա ընթացքում ամենից շատ զոհեր են յեղել

Չինաստանի հեղափոխական մարտիկներից.—սպանված են 423.000 հոգի, վիրավորված են 259.857-ը, ձերբակալված են 108.000 հոգի, իսկ այդ 108.000 ձերբակալվածների մեծ մասը սպանված է բանտերում: Բացի տեղն ու տեղը սպանված 423.000 հոգուց, բանտերում դանդաղ մահով մեռել են դարձյալ 108.000 հոգի:

Յերկրորդ տեղը բռնում է Գերմանիան: Այն տվյալները, վոր մենք ունենք, իհարկե խիստ թերի յեն, վորովհետև ֆաշիստները չեն հաղորդում իրենց կատարած բռնի սպանությունների մասին, իսկ մեր սեկցիան ի վիճակի չէ վիճակագրական ճշգրիտ տեղեկություններ ունենալ: Մեր տրամադրության տակ յեղած թվերի համաձայն Գերմանիայում այդ տարում սպանված է 2.664 հոգի, ծանր վիրավորված է 124.063 հոգի, թեթև վիրավորված — 36.020, ձերբակալված է 219.943 հոգի: Կատարված է 837.421 խուզարկություն:

1933 թվականի ընթացքում բոլոր յերկրներում յեղել է 18.810 դատավարություն, իսկ այդ դատավարությունների ժամանակ մեղադրվողների թիվը—74.384: Համեմատեցեք այդ թիվը սպիտակ տեռորի զոհերի ընդհանուր թըվի,—1.522.208-ի հետ: Այստեղից ինչ յեզրակացություն. —բուրժուա-ֆաշիստական «արդարադատությունը» գերադասում է հեղափոխական մարտիկներին վոչնչացնել առանց դատարանի և քննության, հեղափոխական ավանգարդը վոչնչացնելու գիծ է տանում: Միանգամայն պարզ է, թե ինչու յե այդ արվում: Այդ, ընկերներ, պարզ ցույց է տալիս, թե մոտ է պատերազմը:

Վորպես լրացում այդ ամենի, ինչ վոր յես ասացի Լուցկի և այլ դատավարությունների մասին, բերում եմ մի քանի տվյալներ բանտային ռեժիմից:

Բանտերում ծեծի յե յենթարկվել 200.475 հոգի: Պարզ է, վոր մեր ընկերները, իբրև բողոք այն խոշտանգումների, ծաղրանքների դեմ, վորոնց նրանք յենթարկվում են բանտերում, դիմում են իրենց տրամադրության տակ յեղած միակ միջոցին—սննդադուլին:

1933 թվականին ընդամենը յեղել է 1.366 սննդա-



դուլ: Սննդադուլներին մասնակցել է 17.141 հոգի, վորոնք սնունդ չեն ընդունել 82.750 որ:

Ի հարկե, կարելի յեր բերել ելի ուրիշ շատ տվյալներ: Սահմանափակվում եմ բուրժուական բոլոր յերկրներում յեղած քաղբանտարկյալների միայն վերջին թվով: 1934 թվականի հունվարի 1-ին քաղբանտարկյալների թիվը հասնում եր 437.917 հոգու:

Արդեն միայն այդ վիճակագրական տեղեկությունը ցույց է տալիս, թե վորչափ անհրաժեշտ է մեր ամբողջ աշխատանքը հասցնել ավելի բարձր մակարդակի:

Արտասահմանում մեր աշխատանքն ուժեղացնելու մեթոդներից մեկը «պատրոնատի», մեր լեզվով «հայրենակցական միության» կազմակերպումն է:

Շատ սեկցիաներ չեն հասկանում, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի այդպիսի միությունների կազմակերպումը տնտեսական եմիգրանտների մեջ:

Յեթե գրավենք իտալական ու լեհական տնտեսական եմիգրացիայի հաշվառքով, վորոնք ամենահայտնի եմիգրացիաներն են,—ապա կտեսնենք, վոր այդ յերկու յերկրների տնտեսական եմիգրանտների ընդհանուր թիվը կհասնի մի քանի միլիոն հոգու: Ինչպես տեսնում եք, այդ մարդկանց օգնության գործին ներգրավելու հնարավորությունները հսկայական են: Խնդիրն այն է, վոր աշխատանք սկսվի աշխատավորների այդ մասսաների մեջ, ամենից առաջ ազդելով նրանց զգացումների վրա, ցույց տալով նրանց այն ամենի պատկերը, ինչ վոր կատարվում է բանտերում: Այս է «պատրոնատի» անելիքը: Դժբախտաբար մեր ընկերները բավականաչափ չեն զբաղվում այդ աշխատանքով, թեպետ Գործկոմն անցած տարում մեծ աշխատանք կատարեց այդ ուղղությամբ: Մասնավորապես մենք բավական շատ նամակներ գրեցինք,—թե ընդհանուր բնույթի և թե վորևե առանձին յերկրի հասցեագրված: Լույս է ընծայված մի բրոշյուր այն մասին, թե ինչ է ներկայացնում «պատրոնատին» և այլն: Ցավոք սրտի նույնիսկ Գործկոմի ապարատում վոչ բոլոր արտասահմանյան ընկերներն են բավականաչափ պարզ պատկերաց-

նում «պատրոնատի» խնդիրներն ու ֆունկցիաները, և հաճախ դա շփոթում են շեֆության հետ։ Մինչդեռ դրանք տարբեր բաներ են։ Այլ բան է կանոնավոր շեֆությունը, վոր վարում են ՄՕՊՐի շարքերում գտնվող ընկերները, և այլ բան է «պատրոնատի» կազմակերպումը, վորը ընդգրկում է լայն մասսաներ և հիմնվում սոսկ մասնակցության ու միայն նյութական օժանդակության վրա։ Նրանց օգնությամբ ՄՕՊՐի սեկցիաները կապ են հաստատում բանտարկյալների հետ,—վորոնց կարելի յե կապվել միայն անձամբ, և ապա այդ կապերն օգտագործում են մեր շեֆական աշխատանքի գծով։

Այդ աշխատանքը դեռ նոր է սկսվում, և մենք մեծ գործունեյություն պետք է ծավալենք թե Գործկոմի ապարատում և թե տեղերում, այն կազմակերպություններում, վոր մենք պետք ստեղծենք պատերազմի աճող վտանգի կապակցությամբ։

Կազմակերպչորեն ինչպես ենք ամրապնդում մեր կապը կապիտալիստական յերկրների սեկցիաների հետ և նրանց ղեկավարությունը։

Առաջինը, վորից մենք սկսեցինք, այդ Գործկոմի արտասահմանյան ներկայացուցչությունների ուժեղացումն էր։ Քանի դեռ մեր կողքին գոյություն ուներ նախաֆաշիստական Գերմանիան, մենք շատ խնդիրներ կարողանում եյինք լուծել նրա միջոցով։ Այժմ այդ հնարավորությունը մենք չունենք, ուստի ստիպված եյինք մեր ներկայացուցչությունները ուժեղացնել ուրիշ յերկրներում, վորպեսզի նրանք կանգնած լինեն հաստատուն հողի վրա, սովորեն ինքնուրույն աշխատել և պատերազմ հայտարարվելու դեպքում շատ կապեր ունենան և օժտված լինեն քաղաքական ու կազմակերպչական անհրաժեշտ կարողություններով, անմիջականորեն, առանց մեր ղեկավարության աշխատանք կատարելու համար։

Յերկրորդ,—հասկանալի յե, վոր մենք ի վիճակի չենք ղեկավարելու այն բոլոր սեկցիաները, վորոնք գտնվում են աշխարհիս հեռավոր մասերում, օրինակ՝ Կենտրոնական և Հարավային Ամերիկայի յերկրներում, Կարաիբյան



ծովի շուրջը գտնվող յերկրներում։ Մինչդեռ այնտեղ մեծ աշխատանք է կատարվում։ Այդ յերկրների մեջ իրավամբ առաջին տեղն է բռնում Արգենտինան։ Ահա թե ինչու Միջազգային կոնգրեսից հետո մենք Հարավային Ամերիկայում ստեղծեցինք ներկայացուցչություն, վորը պետք է Գործկոմի և Հարավային Ամերիկայի սեկցիաների միջև միջնորդի ֆունկցիաներ ունենա, հանդես գա մեր լիազոր ներկայացուցչի դերում, ի վիճակի լինի բավականաչափ արագ արձագանքել բոլոր դեպքերին,—առանց մեր ցուցմունքների առանց սպասելու այդ ցուցմունքներին,—և ղեկավարի մոտակա սեկցիաներն այն դեպքում, յեթե մեզ հետ կապը կտրված լինի։

Ի հարկե այդ ձեռնարկությունը կապված է ծախսերի վորոշ ավելացման հետ, բայց յերբ հարկավոր է աշխուժացնել մեր աշխատանքը և դնել պատշաճ բարձրության վրա, միշտ չէ, վոր կարելի ու նպատակահարմար է հաշվի առնել խնայողության նկատառումը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՄԻԳՐԱՑԻԱ

Առաջիկայում մենք պետք է մի անգամ էլ դնենք քաղեմիգրացիայի հարցը։ Դուք գիտեք, վոր դա հիմնադադին հարց է, վորի լուծումը նույնպես կապված է մեծ ծախսերի հետ։ Այս բնագավառում մեր սեկցիաների աշխատանքը նույնպես թերություններ ունի։

Ներկայումս մենք այնքան էլ լավ տվյալներ չունենք քաղեմիգրացիայի մասին։ Սակայն նույնիսկ այդ տվյալների համաձայն, քաղաքական եմիգրանտները հսկայական չափով ավելացել են Գերմանիային շրջապատող յերկրներում։

Սաարի մարզում կա մոտ 500 գերմանացի եմիգրանտ։

Չեխո-Սլովակիայում՝ մոտ յերկու հազար գերմանացի և մոտ յերեք հազար ավստրիացի։

Բելգիայում—1.450 գերմանացի, հրեա, իտալացի, լեհացի և այլ ազգություններ։

Շվեյցարիայում—40 գերմանացի։

Դանիայում, պաշտոնական տվյալների համաձայն, կան

գանազան ազգությունների 25—35 հազար եմիգրանտներ, իսկ հիմնական մասսան—Գերմանիայից գնացած ընկերներն են:

Շվեդիայում կա մոտ 400 գերմանացի:

Իսպանիայում կա 350 պորտուգալացի, 200 եմիգրանտ—Հարավային Ամերիկայից, 50 իտալացի, մոտ 100 գերմանացի, այնպես վոր մեր իսպանական թույլ սեկցիան իր վրա պետք է վերցնի վոչ պակաս, քան 700 մարդու հոգատարությունը:

Քաղեմիգրանտներին օգնություն ցույց տալու բնագավառում մենք դեռ շատ թերություններ ունենք: Շատ ընկերներ կարծում են, վոր բավական է միմիայն նյութական օգնություն հասցնել,—մարդուն բնակարան տալ,—և էլ ուրիշ վոչինչ հարկավոր չէ նրան: Մինչդեռ, բնակարան, ծայրահեղ դեպքում աշխատանք—պրծավ գնաց: Ի հարկե այդ բավական չէ Դժբախտաբար բոլոր յերկրներում, նաև մեր Միությունում, քաղեմիգրանտների մեջ քաղաքական աշխատանք բոլորովին չի կատարվում, կամ անբավարար չափով է կատարվում: Ապագա կենտկոմն ու Գործկոմը պետք է բավական լուրջ ուշադրություն դարձնեն աշխատանքի այս կողմի վրա:

Այդ նույն կապակցությամբ միքանի յերկրներում, որինակ՝ ԱՄՆ-ում, խիստ լուրջ կերպով է դրված իրավաբանական օգնություն ցույց տալու հարցը: Մեր ամերիկական սեկցիան ունի այն կարծիքը, վոր յեթե մարդը դուրս է յեկել բանտից, ապա իսկույն պետք է նրան նավ նստեցնել և ուղարկել Խորհրդային Միություն:

Մենք գիտենք այնպիսի դեպքեր, յերբ մարդը գաղթել է 20—25 տարի առաջ, գաղթել է տնտեսական պատճառներով, քաղաքական վորևէ գործի հետ առնչություն չի ունեցել, իսկ հիմա աքսորվում է այն պատճառով, վոր մասնակցել է քաղաքական գործերին այն յերկրում, ուր գաղթել է: Միքանի ընկերներ կարծում են, վոր յեթե նա հայրենիք վերադառնա, նրան անպայման պիտի բանտարկեն: Յենթադրենք, թե նույնիսկ բանտարկելու յեն նրան: Համենայն դեպս այդ կլինի կարճ ժամանակով, վո-



րովհետև բառ եյության նրան վոչ մի մեղադրանք չի կարող ներկայացվել: Մինչդեռ մենք շարունակ հանդիպում ենք մեր սեկցիաների այն գծին, թե մարդն առհասարակ բոլորովին չպետք նստի բանտում: Այդ այնքան էլ ճիշտ չէ:

Յես արդեն առիթ եմ ունեցել այդ հարցի շուրջը խոսել պլենումներից մեկում և մատնանշել, թե արտասահմանյան մեր սեկցիաներից շատերը հիանում են մեզանով, հին բոլշևիկներով, ասում են, թե մենք յերկաթե կոհորտա յենք և այլն և այլն, մի խոսքով, մեզ յերկինք են բարձրացնում: Վորտեղից է մեր կոփվածությունը: Հենց այն հանգամանքից, վոր մեզ համար հաճախ տեղ չէր լինում գաղթելու, և մենք գաղթում եյինք միայն այն ժամանակ, յերբ արդեն ուրիշ յելք չկար և այլևս բոլորովին անկարելի յեր աշխատել: Մենք նստում եյինք բանտում, բանտը կոփում եր մեզ: Իզուր չէ, վոր վոստիկանությունն ինքը սոցիալիստական համալսարան եր համարում տաղանկան: Այնտեղ մենք լավ դպրոց եյինք անցնում:

Ինչու արտասահմանյան ընկերները պետք է փախչեն ձերբակալման ամենաչնչին վտանգ լինելու դեպքում: Այդ առանձնապես տեղ ունի չեխական սեկցիայում, վորտեղ արդեն սովորություն է դարձել հետևյալը —հենց վոր մի ընկերոջ բանտ է սպառնում, անմիջապես նա գնացք է նստում ու մեկնում Խորհրդային Միություն:

Նույն կերպ են մտածում նաև ամերիկացի ընկերները, վորոնք, ի դեպ ասած՝ մեծ փողեր են ծախսում իրավաբանական պաշտպանության համար, վոր հաճախ լինում է ավելորդ ու անօգուտ: Մենք բազմիցս հարց ենք դրել, թե անհրաժեշտ է, վոր հեղափոխականները խիստ լուրջ իրավաբանական պատրաստականություն ունենան, վորպեսզի իրենք իրենց պաշտպանեն դատարանում: Յեվ այժմ մենք՝ Գործկոմը, Լայպցիգի դատավարությունը և ընկ. Դիմիտրովի հրաշալի վարքագիծն օգտագործեցինք, վորպեսզի այդ դատավարության անալիզի հիմունքներով ցուցումներ տանք մեր ընկերներին, թե ինչպես պետք է պաշտպանվել, ինչպես պետք է իրեն պահել դատարանում:

Մենք գտնում ենք, ընկերներ, վոր ՄՕՊՐ-ի բոլոր կազ-

մակերպությունները այժմ հասել են այն շրջանը, յերբ
այլևս չի կարելի բավականանալ միմիայն իրավաբանական
պաշտպանությամբ: Յերբ մենք գործ ունեյինք մի քանի
տասնյակ մեղադրյալների հետ, կարելի յեր պաշտպան
տրամադրել յուրաքանչյուր մեղադրյալին, իսկ յերբ բուր-
ժուական դասակարգային «արդարադատության» զոհ են
գնում հազարներն ու տասնյակ հազարները, գործը բո-
լորովին այլ բնույթ է ստանում: Չէ՞ վոր դուք յերբեք
այնքան փող չեք հավաքի, վորպեսզի վճարեք պաշտպան-
ներին, իսկ փաստաբանները մեծ մասամբ ձրի չեն պաշտ-
պանի: Ուստի մենք պետք է այնպիսի գիծ բռնենք, վոր
մեղադրյալներն իրենք պաշտպանեն իրենց: Մենք ասում
ենք.—պետք է ոգտագործել Դիմիտրովի դատավարությու-
նը, պետք է ոգտագործել դատարաններում յեղած բոլոր
հռչակավոր ճառերը, վորոնցով մենք, հին բոլշևիկ-
ները, աճել ենք, վորոնցով մենք դատախարակվել ենք:
Վերցրեք ջուլհակ Պյոտր Ալեքսեևի հռչակավոր ճառը, կամ
Վարլենի ճառը ֆրանսիական ուղղիչ ոստիկանության ա-
ռաջ և մի ամբողջ շարք ուրիշ դատավարությունների ժա-
մանակ արտասանված ճառերը: Այդ դատավարություննե-
րի, մեր ուսուցիչների ու հին հեղափոխականների այդ
փայլուն ճառերի հիման վրա մեր ընկերները պետք է սո-
վորեն, թե իրենց ինչպես պիտի պահեն դատարանի ա-
ռաջ, դատական ամբիոնն ոգտագործեն ագիտացիայի հա-
մար, ինչպես այդ բացառիկ հաջողությամբ կատարեց ընկ.
Դիմիտրովը: Այժմ մեր աչքի առաջ տեղի յեն ունենում
խոշորագույն դատավարություններ, վորոնք այս տեսակե-
տից պետք է ոգտագործվեն և վորոնք այնքան էլ բավա-
րար չափով չեն ոգտագործվել ու չեն ոգտագործվում մեր
սեկցիաների կողմից: Վերցրեք թեկուզ բուլղարական 56
զինվորների նույն դատավարությունը: Անկասկած է, վոր
մեր ընկեր բուլղարական զինվորները կարողանում էյին
բավականաչափ պինդ պահել իրենց: Այն բոլոր տվյալնե-
րը, վոր մենք ստանում ենք, ցույց են տալիս, վոր նրանք
ճիշտ վարքագիծ են ցույց տվել:



## ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ԽՍՀՄ ՓՈՐՁԸ

Վերջին հարցը, վորի վրա յես ուզում էյի կանգ առ-
նել, այդ մեր Խորհրդային սեկցիայի աշխատանքի փորձը
Գործկոմի կողմից ոգտագործելու հարցն է: Գործկոմի
քարտուղարության մեջ մենք մի ամբողջ շարք զեկուցում-
ներ ենք լսել մեր սեկցիայի աշխատանքի մասին և յու-
րաքանչյուր այդպիսի զեկուցումից հետո մենք, Գործկոմի
քարտուղարությունը, սովորաբար վորոշել ենք այդ նյութն
ոգտագործել վոչ միայն մեր կենտրոնական մամուլին հոդ-
ված տալու համար, այլև մի շարք բացատրական հոդված-
ների միջոցով մեր Խորհրդային սեկցիայի աշխատանքի
փորձը մեր արտասահմանյան սեկցիաներում տարածելու
համար: Չէ՞ վոր փաստ է, վոր Խորհրդային Միության վե-
րաբերող բոլոր տեղեկությունները վոչ միայն ոգնում են
հասկանալու խորհուրդների յերկրում տեղի ունեցող դեպ-
քերը, այլև ամենահարուստ նյութ են տալիս, վորպեսզի
ընկեր բանվորները, իրենց պայմաններում կիրառելով մեր
մեթոդները, մեր աշխատանքի փորձը, կարողանան ծավա-
լել և ուժեղացնել իրենց աշխատանքը: Մենք կարծում
ենք, ընկերներ, վոր այժմ առանձնապես կարևոր են այդ
խնդիրները, վորովհետև, կրկնում եմ, մենք գտնվում ենք
հեղափոխությունների ու պատերազմների նոր տուրի նա-
խորյակին, և այդ առանձնապես մեծ ու պատասխանատու
խնդիրներ է դնում մեր Գործկոմի վրա:

Մենք չենք կասկածում, վոր Ավստրիայում, Ֆրանսի-
այում, Իսպանիայում հենց նոր տեղի ունեցած դեպքերը
ըստեյության իրենցից ներկայացնում են միայն առաջին
ծիծեռնակներն այն վիթխարի հեղափոխական վերելքի,
վոր այժմ հասունանում է ամբողջ աշխարհում: Յես չեմ
կասկածում, վոր Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկա-
վարությամբ, մեր սիրված առաջնորդ ընկեր Ստալինի
(ծափահարություններ) ղեկավարությամբ, մենք ձեռք կը
բերենք նոր, ավելի մեծ հաջողություններ: (Բուռն ու յեր-
կարատև ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգ-
նում):

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| | էջ |
| ՄՕՊՐի կազմակերպությունների դրությունը | 3 |
| Գործկոմի ֆինանսական քաղաքականությունը | 9 |
| Կամպանիաներ | 15 |
| Մամուլի աշխատանքը | 33 |
| Մեր հակառակորդները | 35 |
| Կադրեր և հոսունություն | 38 |
| Սպիտակ տեռորը | 43 |
| Քաղաքական էմիգրացիա | 47 |
| Օգտագործել ԽՍՀՄ փորձը | 51 |


ՀՀ Ազգային գրադարան
NL0201635

400